Azg
armenian daily
5 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003 ՈՒՐԲԱԹ 224(2909)

ԱՄՆ-ը մտադիր է Ադրբեջանի հետ զարգացնել համագործակցությունը ռազմական ոլորտում

ԲԱԿՈՒ, 4 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը շնորհակալություն է հայտնել Ադրբեջանին գլոբալ ահաբեկչության դեմ մղվող պայքարում ցուցաբերած աջակցության համար: Բաքու կատարած իր այցի արդյունքներին նվիրված մամուլի ասուլիսում նա նշել է այն հիմնական հարցերը, որոնք քննարկվել են Ադրբեջանի նախագահի եւ պաշտպանության նախարարի հետ: Դրանց թվում Ռամսֆելդն առանձնացրել է երկկողմ ռազմական համագործակցության եւ Կասպից ծովում Ադրբեջանի սահմանների ամրապնդման խնդրում փոխգործակցության հարցերը: Պենտագոնի ղեկավարն ընդգծել է, որ ԱՄՆ-ը «մտադիր է առաջիկայում էլ Ադրբեջանի հետ զարգացնել ու ընդլայնել համագործակցությունը ռազմական ոլորտում»: Նա նշել է, որ իր երկիրը կօժանդակի Ադրբեջանին նրա ջրային սահմանների պաշտպանությունն ամրապնդելու, էներգանախագծերի անվտանգության ապահովման գործում, թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարում:

Մինսկի խումբը տարածաշրջան է գալիս նոր գաղափարներով

Ռուդոլֆ Փերինա. «Եթե կա ԼՂ հակամարտության լուծում գտնելու հույս, ապա հենց հիմա է պահը»

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Բախվում Ադրբեջանի իշխանությունների հետ բանակցություններով այսօր ԵԱՀԿ Մինսկի խումբն սկսում է հերթական այցը տարածաշրջան: Երեւանում Հայաստանի ղեկավարության հետ բանակցություններից հետո ամերիկացի, ռուս եւ ֆրանսիացի միջնորդները կուղեւորվեն Ստեփանակերտ, որտեղ կիրակի օրը նրանք կհանդիպեն ԼՂՀ պաշտպանության նախարարի, արտգործնախարարի եւ նախագահի հետ:

Միջնորդների այցն ուշագրավ է նրանով, որ առաջինն է Հայաստանում եւ Ադրբեջանում տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո: Ամերիկացի եռանախագահ Ռուդոլֆ Փերինան ռուսական «Նեզավիսիմայա գազետա» թերթին տված հարցազրույցում ասել է. «Հուսով ենք, որ այժմ, երբ ընտրությունները հետեւում են, բանակցություններում կլինի ինչ-որ առաջընթաց: Այժմ երեւան են եկել շատ լավ հնարավորություններ. ունենք երկու նախագահներ նոր մանդատներով: Եթե կա ԼՂ հակամարտության լուծում գտնելու հույս, ապա հենց հիմա է պահը»:

Նիդեռլանդների Մասստրիխտ քաղաքում օրերս տեղի ունեցած ԵԱՀԿ նախարարների 11-րդ հանդիպման շրջանակներում Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարները հանդիպել են Մինսկի խմբի եռանախագահներին եւ, ենթադրաբար, Վարդան Օսկանյանը եւ Վիլայաթ Գուլիեւը ծանոթացել են ղարաբաղյան կարգավորման նոր գաղափարներին կամ, այսպես կոչված, բանավոր առաջարկություններին, որոնց բովանդակությանը պաշտոնական Ստեփանակերտը հնարավորություն կունենա ծանոթանալու գալիք կիրակի օրը:

Տես էջ 3

ԴԵՊՔԵՐԻ ՀԵՏ

Մոսկվան խիստ դժգոհ է Թբիլիսիից

Թբիլիսիում վերջին մի քանի օրերին տեղի ունեցող արտառոց դեպքերը հուշում են, որ Վրաստանում այսպես կոչված «վարդյա կամ թավշյա հեղափոխությունը» դեռեւս չի ավարտվել:

Երբ Թբիլիսիում Ռուսաստանի դեսպան Վլադիմիր Չիխիկվիձվիլին ելույթ էր ունենում պետական հեռուստատեսության ուղիղ եթերում՝ մեկնաբանելով Վրաստանի վերջին ներքաղաքական զարգացումները, բեմում տեղի ունեցավ պայթյուն: «Այն, ինչ տեղի ունեցավ քիչ առաջ, վկայում է, որ Վրաստանում իրավիճակն անկայուն է», ասաց դեսպանը, հավելելով, որ պայթյունը եւս մի ապացույց է, որ «թավշյա հեղափոխությունից» հետո Վրաստանը չի կարգավորել ներքին խնդիրները:

Նախօրեին կարճաժամկետ այցով Թբիլիսի էր ժամանել հայտնի օլիգարխ Բորիս Բերեզովսկին եւ հանդիպել իր ընկերոջը՝ մեկ այլ հայտնի օլիգարխ Բադրի Պատարկացիշվիլուն: Ազգությամբ հրեա այս երկու միլիոնատերերի նկատմամբ Ռուսաստանում քրեական գործ է հարուցվել՝ 1994-1995 թթ.՝ Ռուսաստանի տարածքում կատարած մեքենայությունների ամբաստանությամբ, իսկ Բերեզովսկուն նկատմամբ հայտարարված է միջազգային հետախուզում: Թե ինչ նպատակով է Բերեզովսկին այցելել Թբիլիսի, հայտնի չէ, սակայն հստակ է, որ իր «գիտերային» այցով նա ավելի է սրել ռուս-վրացական հարաբերությունները: Մոսկվան Թբիլիսիից բացատրություն է պահանջել կատարվածի համար, ՌԴ ԱԳՆ է հրավիրվել Վրաստանի դեսպան Զուրաբ Աբաշիձեն, որին փոխանցվել է բողոքի նոտա:

Երեկ քարոզչական արշավն է սկսել Վրաստանի ապագա նախագահի ամենահավանական թեկնածու Միխայիլ Սաակաշվիլին: «Մենք անելու ենք հնարավորը, պահպանելու կարգուկանոն եւ կայունություն մինչեւ հունվարի 4-ը եւ ապագայում:

Տես էջ 2

Ձերբակալվել են «Պոռը», «Պլտինը», «Կիկին», «Մաքը», «Գոգոն» ու «Թոմը»

Ինչպես տեղեկացանք ՀՀ ազգային անվտանգության ծառայության մամուլի կենտրոնի տարածած ինֆորմացիայից, ՀՀ ԱԱԾ մարմինների իրականացրած միջոցառումների արդյունքում դեկտեմբերի 3-ին, ժամը 12:30-ին, «Զվարթնոց» օդանավակայանում ձերբակալվել է Աստրախան-Երեւան չվերթով ժամանած Երեւանի բնակիչ Ռուբեն Խորենի Հայրապետյանը (հանցավոր ախարհում հայտնի է «Պոռոշ» մականունով), որը փորձել էր մաքսանենգ ճանապարհով Երեւան ներկրել 100 գրամ հերոին տեսակի թմրանյութ:

«Զվարթնոց» օդանավակայանում ձերբակալվել են նաեւ հանցախմբի մասնակիցներ Արտաշես Վահանի Հարությունյանը (մականունը՝ «Պլտին») եւ Արթուր Միշայի Դարբինյանը («Կիկի» մականվամբ): Արտաշես Հարությունյանի մոտ հայտնաբերվել է 4 գրամ հերոին տեսակի թմրանյութ: Բացահայտվել եւ ձերբակալվել են նաեւ կազմակերպված հանցավոր խմբի մյուս անդամները. Արթուր Կազբեկի Աղաջանյանը (մականունը՝ «Մաքս») նախկինում եղել է ներքին գործերի 6-րդ վարչության եւ ռազմական ոստիկանության աշխատակից: Նրա բնակարանում հայտնաբերվել եւ առգրավվել են տրոտիլ տեսակի պայթուցիկ, հակահետեւակային ականներ, նռնակներ, դետոնատորներ եւ այլ զինամթերք: Գեւորգ Համբարձումի Վարդանյանը (մականունը՝ «Գոգո») նախկինում աշխատել է ՆԳՆ 7-րդ վարչությունում: Նրա մոտ հայտնաբերվել եւ առգրավվել է «Մակարով» ատրճանակ, լիցքավորված պահունակով եւ 20 գրամ հերոին: Թովմաս Վարդգեսի Մխիթարյանը (մականունը՝ «Թոմ»), որը զբաղվում է թմրանյութի իրացմամբ:

Պարզվել է, որ հանցախմբի անդամները 2002-2003 թթ. մաքսանենգ ճանապարհով հանրապետություն են ներկրել եւ իրացրել 7 կգ հերոին՝ գրամը 120 ԱՄՆ դոլարով: ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունը հարուցել է քրեական գործ ՀՀ քր. օր.-ի 215 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Երկրաշարժի զոհերի հիշատակին. Այսօր համերգ Մոսկվայի Միությունների տանը

ՄՈՍԿՎԱ, 4 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ռուսաստանի հսկայական աջակցության շնորհիվ Հայաստանը հաղթահարեց Սպիտակի երկրաշարժին հաջորդած ծանր ժամանակաշրջանը», ողբերգության 15-րդ տարելիցի կապակցությամբ հայտարարել է Համաշխարհային հայկական կազմակերպության նախագահ եւ Ռուսաստանի հայերի միության ղեկավար Արա Աբրահամյանը: «Մեր ժողովուրդներին միավորում է մշակույթն ու լեզուն, եւ մենք պետք է պահպանենք մեր մշակույթը, որը եղել է նաեւ Խորհրդային Միության ժամանակներում», ընդգծել է Արա Աբրահամյանը եւ ավելացրել, որ «միայն Ռուսաստանի հետ մենք կարող ենք դիմակայել յուրաքանչյուր դժբախտության»:

Դրա հետ մեկտեղ նա նշել է, որ «այսօր Հայաստանում դեռեւս շատ են այն մարդիկ, ովքեր հոգատարության կարիք ունեն»: «Մենք ջանում ենք նրանց հնարավորինս օգնել, սակայն դա բավարար չէ», նշել է Արա Աբրահամյանը:

Նա հայտնել է, որ դեկտեմբերի 5-ին Միությունների տան Այունազարդ դահլիճում տեղի կունենա համերգ՝ նվիրված 1988 թվականի երկրաշարժի զոհերի հիշատակին: Դրան կմասնակցեն Ռուսաստանի, Բելառուսի եւ Ուկրաինայի գեղարվեստական համույթներ:

ԱԶԳԱՄԻՋՅԱՆ

Մոսկվայում իրո՞ք ուժեղ են հակակովկասյան տրամադրությունները

Պատասխանում է մոսկովյան մամուլը

Երեւանում բարեկամներս, ընկերներս, ծանոթներս հաճախ են հարցնում՝ Ռուսաստանում, մասնավորապես Մոսկվայում իրո՞ք ուժեղ են հակակովկասյան տրամադրությունները: Նման մտահոգությունը վերացական չէ. այսօր Հայաստանում, ցավոք, շատ-շատ են այն ընտանիքները, որոնք իրենց «ներկայացուցիչն» ունեն Ռուսաստանում: Ես հաճախ եմ «Ազգ»-ի էջերում քննարկել այս հիվանդագին թեման, ընդ որում իմ որոշ նկատառումներ (որ կովկասցիները, բնականաբար նաեւ հայերը, մեղքի մեծ բաժինն ունեն նման տրամադրությունների առաջացման մեջ) գոհունակություն չեն առաջացրել Հայաստանում: Այս անգամ նման հարցերի պատասխանները ես կտամ մոսկովյան մամուլից բերված մեջբերումներով՝ առանց մեկնաբանությունների:

– Տպավորություն է ստեղծվում, որ հակակովկասյան տրամադրություններով ավելի շատ համակված է Ռուսաստանի երիտասարդությունը: Համենայն դեպս, նրանք են կազմակերպում անկարգություններ, սպանություններ, ջարդեր եւ այլն: Իրո՞ք այդպես է:

– Սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ մոսկվացի ուսանողների 90 տոկոսն այն կարծիքին է, որ նախկին խորհրդային հանրապետություններից ներգաղթած անձինք վտանգի աղբյուր են իրենց բարեկեցության համար: Հարցվածների 96 տոկոսը պնդում է, որ Կովկասից եկածների ներկայությունը բացասաբար է անդրադառնում մայրաքաղաքի սանիտարական վիճակի վրա, 57 տոկոսը՝ որ նրանք բացասաբար են ազդում աշխատանքի շուկայի վրա, 71 տոկոսը՝ որ այդ մարդիկ զբաղեցնում են բնակարաններ, որոնք չեն հերիքում բուն բնակիչներին: Պերվոմրեսոլնիի երիտասարդների 56 տոկոսը տանել չի կարող «կովկասյան ազգության անձանց» եւ պահանջում է, որ նրանք վերադառնան իրենց հայրենիքը:

Տես էջ 2

Պայթյունավտանգ իրավիճակում հրեջները կանխեցին վտանգը

Ինչպես տեղեկացանք 1:01 հրեջ ծառայության հերթապահ մասից, դեկտեմբերի 4-ին, ժամը 14:45-ին, Երեւանի կայարանամերձ հրապարակում՝ Արցախի 6 հասցեի բենզալցման կայանի հարեւանությամբ, «ՊԱԶ» մակնիշի 67 ՍՍ 667 ավտոբուսը անսպասելիորեն բռնկվել է: Առաջացած հրդեհը մեծ վտանգ է ներկայացրել շրջակա միջավայրին եւ բենզալցման կայանին: Սակայն Երեւան քաղաքի 2-րդ եւ 3-րդ ռազմականացված հրեջ մասերի ուժերով հրդեհը մարվել է երրորդ հրեջ մասի պետի տեղակալ Արսեն Դավթյանի գլխավորությամբ: Զոհեր եւ վիրավորներ չկան:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆԿԱՐՅԱՆ

ԸՆԹԱՑԻԿ

Երրորդ գումարման ազգային ժողովի նստաշրջանն ավարտվեց

Մի քանի ամսվա ընթացքում ավելի քան 100 օրենքներ են ընդունվել

Ազգային ժողովի երրորդ գումարման առաջին նստաշրջանն ավարտվեց: Փորձառու եւ միայն այս աշնանը մկրտված, ընդդիմադիր եւ դիմադիր պատգամավորներին, արածն ու չարածը, պարտվածը եւ հաղթածն արժեւորելու հնարավորություն տվեցին լրագրողները՝ երեկ, նստաշրջանի վերջին ճեպազրույցների ժամանակ:



Հրայր Կարապետյան *(«ՀՀՊ» խմբակցության քարտուղար)*- Աշնանային նստաշրջանի աշխատանքը դրական եմ գնահատում, որովհետեւ այն բոլոր նախընտրական խոստումները, որոնք արծարծվել են կոալիցիոն ուժերի ծրագրերում, հիմնականում մտան խորհրդարան: Մի շարք թեմաներ, գլխավորապես սոցիալական բնույթի, դեռեւս մնում են, օրինակ՝ զոհված ազատամարտիկների, զինծառայող վետերանների հետ կապված եւ բազմաթիվ այսօրինակ խնդիրներ: Խորհրդարանը գնաց այնպիսի քայլերի, որոնք բխում են հասարակական շահերից, օրինակ, խմելու ջրի, ջրաչափերի տեղադրման հարցերը:

Մհեր Շահգելդյան *(ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի հանձնաժողովի նախագահ)*- Այս մի քանի ամիսների ընթացքում ավելի քան 100 օրենքներ են ընդունվել, 10-ից ավելի լսումներ կազմակերպվել մի շարք կարեւոր հիմնախնդիրների շուրջ: Ընդդիմությունը եւ կոալիցիան սկզբունքային դիրքորոշումներ պահպանելով հանդերձ, տարբեր օրենսդրական հարցերի շուրջ կարողացել են համաձայնության գալ, համատեղ աշխատել, որը շատ կարեւոր է: ԱԺ նախագահն այս ընթացքում եղել է Հայաստանի մոտավորապես 20 բնակավայրերում, հանդիպել բնակչությանը, հընթացս մի շարք հարցերի լուծումներ են տրվել, մի քանիսը լուծման ընթացքում են: Հասարակության հետ շփումների եւ բաց լինելու սկզբունքը ռազմավարական է եւ շարունակվելու է նաեւ հետագա աշխատանքի ընթացքում: Դրա արտահայտությունն են նաեւ ԱԺ նախագահին կից հանձնաժողովները՝ հաշմանդամների, փախստականների, քաղաքացիների իրավունքների պաշտպանության եւ այլն:

Վիկտոր Դալլաքյան *(«Արդարություն» խմբակցության քարտուղար)*- Այս նստաշրջանի ամենակարեւոր օրենսդրական նախաձեռնությունները համարում եմ հանրաքվեի օրենքում փոփոխությունների օրինագիծը, որը մեծ օրակարգում է: Խորհրդարանի երկրորդ ամենակարեւոր քայլը՝ ավանդների վերադարձման օրենքը նստաշրջանի օրակարգ ընդգրկելը, եւ երրորդը՝ սակագները սառեցնելու մասին օրենսդրական նախաձեռնությունը, որի ժամկետը դեկտեմբերի 5-ին կլրանա: «Արդարություն» խմբակցությունն այս ընթացքում հեղինակել է մոտ 4 տասնյակ օրենսդրական նախաձեռնություններ:

Իսկ թե որն է աշնանային նստաշրջանի ընթացքում ընդունված հասարակական բարորության համար այս կամ այն չափով վտանգ ներկայացնող օրինագիծը, Վ. Դալլաքյանը պատասխանեց. «Առավել վտանգավորը 2004 թ. պետական բյուջեն է: Բյուջեն ռիսկային է, բյուջեն սոցիալական չէ, քանի որ համատարած թանկացումների պայմաններում եթե մի քանի դրամով ավելացնում են թոշակները կամ նպաստները, դրանից ոչ մի բան չի փոխվում»:

Իսկ աշնանավերջի քաղաքական իրողությունը, որ կարող է սկանդալի հավակնել, ՀՀՊ խմբակցության քարտուղար Հրայր Կարապետյանը համարեց նախկին ԱԺ պատգամավոր Ռուբեն Գեւորգյանի ձերբակալությունը, եւ ցավ հայտնեց, որ ձերբակալություններին, սպանություններին «շարանում» հայտնվում են նաեւ մարդիկ, ովքեր մեծ ներդրում են ունեցել Արցախի ազգային-ազատագրական պայքարում:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագիր

ԵՐԵՎԱՆ, 4 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ կառավարությունն այսօր հաստատել է Տուբերկուլյոզի դեմ պայքարի 2003-2006 թթ. ազգային ծրագիրը: Հաստատվել են նաեւ ծրագրի իրականացման ժամանակացույցը եւ առողջապահական ազգային ծրագրերը համակարգող հանրապետական միջգերատեսչական խորհրդի կազմը: Ծրագրի նպատակն է կանխարգելել տուբերկուլյոզի տարածումը, առավելագույնս հայտնաբերել հիվանդներին, ապահովել անվճար հակատուբերկուլյոզային բժշկական ծառայություն: Հակատուբերկուլյոզային պայքարի համար, բացի միջազգային կազմակերպությունների ֆինանսավորումից եւ ակնկալվող դրամաշնորհներից, նախատեսվում է պետբյուջեից 2004 թվականին հատկացնել 717,5 մլն դրամ:

Ըստ ՀՀ առողջապահության փոխնախարար Հայկ Դարբինյանի, ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում նույնպես վերջին 10 տարիներին տուբերկուլյոզով հիվանդացությունն աճել է 2,5 անգամ, 40 տոկոսով բարձրացել է մահացությունը: Հաճախացել են հիվանդության սրընթաց ձեւերը՝ մահացու ելքով, մանրէազատումով հիվանդացությունն աճել է գրեթե 2 անգամ, նկատվում է շփման մեջ գտնվողների հիվանդացության աճ՝ 0,6-1,8 տոկոս, հաճախակի են դարձել «ընտանեկան տուբերկուլյոզի» դեպքերը: Ավելի շատ հանդիպում են աշխատունակ տարիքի մարդկանց հիվանդության դեպքեր, որոնց մեջ 15-24 տարեկան երիտասարդների տեսակարար կշիռը կազմում է 30:

Փոխնախարարի խոսքերով, այսօր հանրապետությունում գրանցված է տուբերկուլյոզով 5.620 հիվանդ, տարեկան հայտնաբերվում է 1000-1200 առաջնակի հիվանդ: Սակայն, ծրագրի շրջանակում հիվանդների հայտնաբերելիության մակարդակը բարձրացնելու արդյունքում, հիվանդների թիվը 1-2 հազարով կմեծանա:

Նրա կարծիքով, տուբերկուլյոզը վերջին տարիներին դադարել է սոսկ սոցիալական հիվանդություն լինելուց, հարուցիչը փոխել է իր դեմքը եւ դարձել ավելի տեղակայուն, այն արդեն միայն սոցիալ-տնտեսական գործոնով չի պայմանավորված: Ինչ վերաբերում է բանակում հիվանդացության տարածվածության մակարդակին, ապա, Հ. Դարբինյանի հավաստմամբ, այնտեղ, եւ բնակչության շրջանում հիվանդացության մակարդակը նույնն է:

Ծրագիրն իրականացվելու է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական ծրագրի համագործակցությամբ, քանի որ ՄԻԱՎ վարակիրները ավելի խոցելի են տուբերկուլյոզի նկատմամբ:

Մոսկվան խիստ դժգոհ է Թբիլիսիից

Սկիզբը էջ 1

Կան ուժեր, ովքեր ցանկանում են Վրաստանում քաոս ստեղծել», ասել է Սաակաշվիլին:

Վերջին մի քանի օրերին Վրաստանում գրանցվում են մահափորձի, կողոպուտի, ահաբեկչության դեպքեր: Դեկտեմբերի 1-ին պայթյուն էր տեղի ունեցել Լեյբորիստական կուսակցության կենտրոնական գրասենյակի դիմաց: Հաջորդ օրն անհայտ անձինք կրակ էին բացել նախկին նախագահ Շեւարդնաձեի կողմնակիցներից Իրինա Սարիշվիլու տան վրա, իսկ երեկ անհայտ անձինք կողոպտել էին Թբիլիսիի բանկերից մեկը՝ տանելով ավելի քան 60 հազար ԱՄՆ դոլար:

Երեկ Թբիլիսի է ժամանել ԱՄՆ պետքարտուղարության բարձրաստիճան պաշտոնյաներից Լին Պասկոն: Երկրի ժամանակավոր նախագահ Նինո Բուրջանաձեի հետ հանդիպման ընթացքում Պասկոն ԱՄՆ-ի կառավարության անունից Վրաստանին խոստացել է 7 մլն դոլարի օժանդակություն: Այսօր սպասվում է ԱՄՆ պաշտպանության քարտուղար Դոնալդ Ռամսֆելդի այցը:

Թ. Հ.

ԱԶԳԱՍԻՐՅԱՆ

Մոսկվայում իրո՞ք ուժեղ են հակակովկասյան տրամադրությունները

Պատասխանում է մոսկովյան մամուլը

Սկիզբը էջ 1

- Կարելի՞ է ասել, որ ինքնակվող հարցն ամենայն սրությամբ է դրված Մոսկվայում, եւ ինչի՞ կարող է դա հանգեցնել:

- Պատահական չէ, որ Ռուսաստանի մայրաքաղաքն անվանում են XXI դարի Բաբելոն: Այստեղ են խտացել ու միահյուսվել այն գործոնները, որոնք բնորոշում են ազգամիջյան խնդիրների բոլոր նրբերանգները՝ ազգային փոքրամասնությունների իրավունքից մինչեւ ռուսական հարցը: Իսկ այդ խնդիրների հանգուցակետը կազմում են մայրաքաղաքի բնակչության ռուս մեծամասնության եւ ՌԴ մյուս սուբյեկտներից ու մերձավոր արտասահմանից (նախ եւ առաջ Հյուսիսային Կովկասի ու Անդրկովկասի հանրապետություններից) զանգվածաբար ներգաղթող ոչ ռուս փոքրամասնության փոխհարաբերությունները: Որ «ռուս-կովկասյան» հարցն առկա է ներկայիս Մոսկվայում (ասենք, առհասարակ Ռուսաստանում), վկայում են բոլոր սոցիոլոգիական հարցումները: Դրանց արդյունքների հետազոտությունները ցույց են տալիս, որ մոսկվացիների մեջ ավելի վաղ գոյություն ունեցող «հակավերաբերմունքն» ամերիկացիների, հրեաների դեմ այսօր բեւ չի անհետացել, բայց երկրորդ պլան է մղվել՝ ի դեմս «կովկասյան սպառնալիքի», որը հարցման ենթարկվածները ձեւակերպել են հետեւյալ կերպ. «Եթե Մոսկվայի բնակեցումը «կովկասյան ազգության անձանցով» շարունակվի նույն տեմպերով, ապա ազգամիջյան հարաբերությունների ներդաշնակեցման հարցը կլուծվի ինքնին՝ քաղաքում պարզապես այլազգի մարդիկ չեն մնա»:

- Ռուսները տարբերություն դնո՞ւմ են կովկասյան ազգերի միջեւ:

- 1955 թ. համեմատ Մոսկվայում կովկասյան ազգերի ներկայացուցչությունն ավելացել է ավելի քան 20 անգամ: Կովկասյան համայնքներից ամենամեծաքանակն ադրբեջանականն է: Որոշ տվյալներով, մայրաքաղաքում ներկայումս բնակվում են 800 հազար ադրբեջանցիներ: Տեղի վիճակագիրները հաշվել են, որ եթե Անդրկովկասի բնակիչների ժողովրդագրական հարձակումը շարունակվի ռուսների մահացության առկա ֆոնի վրա, ապա, հաշվի առնելով հարավցի հյուրերի բազմազավակության գործոնը, արդեն կես դար հետո հենց միայն ադրբեջանցիները կարող են կազմել մայրաքաղաքի բնակչության մեկ երրորդ մասը: Ներկա ընտրական համակարգի պայմաններում դա նրանց անվիճելի առավելություն կտա թափանցելու ոչ միայն քաղաքի, այլեւ երկրի իշխանական կառույցները: Նման պարագայում մեր թոռներին սպասում է Անդրկովկասի էթնիկ ռուսների ճակատագիրը:

- Որո՞նք են կովկասցիների անցանկալիության հիմնական մոտիվները:

- Ըստ էության, Ռուսաստան գալիս են ոչ թե բժիշկներ, ուսուցիչներ, ինժեներներ. ներգաղթի հիմքը կազմում է անորակ զանգվածը, շուկայական առեւտրականները, էլ չենք ասում քրեականների մասին: Օտար երկիր բերելով իրենց ավանդույթներն ու սովորությունները, նրանք գրեթե հաշվի չեն նստում տեղի բնակչության հետ: Ոչ թե ուզբեկական, թուրքմենական կամ չինական, այլ հենց կովկասյան հանցախմբերն են ահաբեկում ողջ Ռուսաստանը: Որտեղ ասես դրանք չեն գործում՝ Մոսկվայից մինչեւ ծայրամասերը: Նույնիսկ դժվար է պատկերացնել, որ ռուսական կազմակերպված հանցախմբերը գործեն ու սարսափի մեջ պահեն Ադրբեջանի, Վրաստանի կամ Հայաստանի որեւէ մի բնակավայր: Վերջերս «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթը կազմել էր մի քարտեզ, որից երեւում էր, որ ամբողջ երկրի շուկաների 80 տոկոսը վերահսկում են կովկասցիները: Ռուս գյուղացուն շուկայի մուտքից ներս չեն թողնում. նրանից կոմեկներով առնում են ապրանքը եւ եռակի գնով վերավաճառում: Մոսկվայում կատարվող հանցագործությունների առյուծի բաժինը պատկանում է «կովկասյան ազգության անձանց»: Էլ չենք ասում կենցաղային գռեհկությունների մասին, որոնք անքիվ-անհամար են:

- Ի՞նչ կարելի է սպասել առաջիկայում:

- Կենսական ներկա իրողությունները մոսկվացիներին դրդում են նացիոնալիզմի: Ընդսմին այս երեւույթը շատ ավելի լուրջ է, քան սակավաթիվ եւ ոչ մի ազդեցություն չունեցող երիտասարդական ծայրահեղական կազմակերպությունների գոյությունը: Հասարակության մեջ տեղի ունեցող գործընթացները հղի են պայթյուններով ազգամիջյան հողի վրա, որոնց առաջը չես առնի «ֆաշիզմի» մեղադրանքներով: Վերջին տարիներս իրար հետեւից ջարդեր կազմակերպվեցին շուկաներում, որոնց մասնակցում էին ջահել ծայրահեղականներ: Այդ ալիքը կուժեղանա, եթե պետական մակարդակով չկանխվի ոչ ռուսական ծագման ներգաղթողների հոսքը, իրենց պատմական հայրենիք չարտահանվեն ապօրինի բնակվողները եւ չվերացվեն կովկասյան կազմակերպված հանցախմբերը, այդ թվում նաեւ «քրեական հեղինակությունների» վոնդման հաշվին, որոնց ներկայությունը սպառնում է Ռուսաստանի ազգային անվտանգությանը: Դա վերաբերում է ինչպես Հյուսիսային Կովկասից, այնպես էլ Վրաստանից, Ադրբեջանից, Հայաստանից եւ այլ երկրներից թափանցած հանցագործներին:

- Ի՞նչ է արվում խնդրի կարգավորման ուղղությամբ:

- Ներգաղթի բնագավառում կարգուկանոն հաստատելու ուղղությամբ առաջին քայլերից մեկն այն էր, որ Ռուսաստանը դուրս եկավ ԱՊՀ երկրների հետ առանց վիզայի հաղորդակցության համաձայնագրից: Խստացել է քաղաքացիություն ընդունելու կարգը, ներգաղթի ծառայության ֆունկցիաները հանձնվել են ՆԳՆ-ին: Բայց այդ միջոցները դեռեւս անբավարար են: Ոչ հարուստ ներգաղթողներն օգտվում են սահմանների թափանցիկությունից, իսկ ուրիշների համար խնդիր չէ ոչ միայն սահմանների հատումը, այլեւ քաղաքացիության ընդունումը: Կաշառքով կարելի է գնել ինչ սիրտդ ուզի: Սահմանադրությամբ հռչակված՝ քաղաքացու բնակության վայրի փոփոխման եւ տեղի ընտրության ազատությունը պահանջում է ոչ միայն իրավական ամրագրում, այլեւ նյութական աջակցություն, ինչպես նաեւ քաղաքական-կամային ռեսուրս: Հակառակ դեպքում այդ ազատությունն ինքնահոսի է մատնվում եւ իրականացվում է որպես ամենաթողություն ոմանց համար՝ ուրիշների իրավունքների ու ազատությունների ոտնահարման ու սահմանափակման հաշվին: Իսկ Մոսկվան կարիք ունի նաեւ ներգաղթի գործընթացի խստիվ կարգավորման եւ այնպիսի հաստատված միջոցների իրագործման, ինչպիսիք են մայրաքաղաքի շուկաների ապամենաշնորհումը, դրանց քրեական-մաֆիոզային էթնիկական վերահսկման վերացումը:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա-Երեւան

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայություն
/ հեռ. 582483
Apple Macintosh
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են. համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Եվրոպային ինտեգրվելը դուրին է, երբ հասարակությունը տեղեկացված է

Իսկ որչա՞փ ենք տեղեկացված մենք

Եվրախորհրդի առջեւ ստանձնած պարտավորությունների կատարման ճանապարհին Հայաստանում նկատելի են եվրոպական կառույցներին ինտեգրվելու որոշակի դժվարություններ, որոնք հիմնականում բացատրվում են հասարակության անիրազեկությամբ ու թյուրըմբռնումով: Այժմ Ազգային ժողովում բուռն քննարկումների փուլում է այլընտրանքային զինծառայության օրենքը, որին հաջորդելու է ոչ ավանդական եկեղեցիների գրանցման օրենքի քննարկումը:

«Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է մեկ տարի առաջ՝ եվրոպական օրենքները հասարակությանը ծգդիս ներկայացնելու եւ ըմբռնելի դարձնելու նպատակով: Կազմակերպությունը համագործակցում է ինչպես Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովի ու մի շարք հասարակական կազմակերպությունների, այնպես էլ միջազգային որոշ կառույցների հետ: Կազմակերպության ղեկավար, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Կարեն Բեֆարյանը Եվրախորհրդի առջեւ մեր երկրի ստանձնած պարտավորություններից արդի փուլում կարեւոր է համարում այլընտրանքային զինծառայության եւ ոչ ավանդական եկեղեցիների գրանցման օրենքների ընդունումը, քանի որ հասարակության մեջ դրանք ընդունվել են ոչ միարժեքորեն: Նրա դիտարկմամբ, կան օբյեկտիվ եւ սուբյեկտիվ այնպիսի գործոններ, ինչպիսիք են մեր երկրի ներկա իրավիճակը, հարեւան երկրների հետ հարաբերությունները եւ այլն, որոնք ստեղծում են որոշակի խնդիրներ, մտավախություններ: Ամենից մտահոգիչը հասարակության անտեղյակության պակասի պատճառով առաջացած խնդիրներն են, որոնք հետեւանք են քաղաքական ու իշխանական թեւերի, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների ոչ բավարար աշխատանքի: Եվրոպական կառույցներին ինտեգրվելու գործընթացը, ըստ պրն Բեֆարյանի, հաճախ հասարակության համար մնում է սոսկ վերնագիր եւ չի արժանանում համակողմանի եւ լիարժեք լուսաբանման: Օրինակ, կրոնական փոքրամասնությունների վերաբերյալ որեւէ հարցի մասին լսելիս մարդիկ միանգամից պատկերացնում են, թե նրանց գործունեության լիակատար ազատություն է տրվում: Հասկանալի է, որ նմանատիպ հարցերը առանց վերլուծությունների ու քննարկումների հասարակությանը ներկայացնելով՝ ստեղծվում է հակասական վերաբերմունք եվրոպական արժեքների ու ինտեգրացիայի նկատմամբ: Նրա համոզմամբ, հասարակության վերաբերմունքը հստակեցնելու առումով մեծ անելիքներ կան, քանի որ բացատրական աշխատանքի տանելով որոշ տեղերում դրական փոփոխություն է արձանագրվել: Երբ մարդկանց տեղյակությունը մեծանում է, նրանք առանց երկմտելու ընդառաջ են գնում նոր օրենքներին, այստեղից էլ հետեւում է, որ արդյունավետ քննարկումների միջոցով պետք է տեսանելի դառնան բոլոր մարտահրավերները՝ երկրի համար ոչ

ցանկալի խնդիրներից խուսափելու համար:

«Եթե հաշվի առնենք առկա քաղաքական տարանջատումը, քաղաքային եւ գյուղական բնակչության իրազեկության զգալի տարբերությունը եւ արգելակող այլ գործոններ, ապա հասկանալի կդառնա յուրաքանչյուր քաղաքացու դիրքորոշումը, թե ո՞ւր է գնում մեր երկիրը, ինչո՞ւ ենք ինտեգրվում, ո՞րն է ի վերջո դրա առավելությունը, այլապես մոտ ապագայում կունենանք մի իրավիճակ, երբ ներսի ամեն մի խնդիր կկապվի ինտեգրացման հետ եւ ինչ-ինչ կաղապարների թելադրանքով կբեւեռվի միայն բացասականը: Տեղեկատվության բարձրացմանը զուգընթաց մեր ժողովուրդը կհամոզվի, որ Հայաստանն առանց ինքնուրույն նկարագրի պետք չէ Եվրոպային: Լիովին կվերանա այն թյուր պատկերացումը, թե ինտեգրացում նշանակում է հրաժարում ազգային արժեքներից, որոշակի ինքնիշխանության տրամադրում եւ այլն: Ամենից առաջ պետք է գիտակցենք, որ Եվրախորհուրդը նույնպես ազգային պետությունների միավորում է, որի համար ամենամեծ արժեքը ամեն մի պետության ազգային ինքնուրույն նկարագրի պահպանումն է: Ուրեմն մեր իշխանությունները պետք է խուսափեն եվրոպական կառույցներին կուրորեն հետեւելուց ու նմանակելուց եւ հիմնվելով մեր ունեցած ժառանգության վրա՝ հնարավորինս բաց ու անկեղծ լինեն ժողովրդի հետ, որպեսզի նրանց վստահություն ու հավատ ներշնչեն», ասում է պրն Բեֆարյանը:

Անդրադառնալով կրոնական փոքրամասնությունների կամ այսպես կոչված ոչ ավանդական եկեղեցիների գրանցման խնդրին, նա ընդգծում է, որ հասարակությունն այդ խնդիրն ընկալել է այնպես, իբր նրանց գործունեության համար հետաքրքիր մեխանիզմներ են ստեղծվում: Մինչդեռ պատկերն այլ է, իրականում պահանջներն ավելին են, քանի որ նրանց չգրանցելու փաստը պետք է սահմանված լինի օրենքով, ինչպես Ֆրանսիայում, որտեղ, օրինակ, «Եհովայի վկաներին» չեն գրանցում, որովհետեւ օրենքով արգելված է հոգեորսությամբ զբաղվելը: Ըստ էության դա հանգեցնում է իրավական դաշտի առաջացման, որով մեր երկրի օրենսդրությունը ոչնահարող յուրաքանչյուր կազմակերպություն զրկվում է գրանցման իրավունքից: Նույնը վերաբերում է նաեւ այլընտրանքային զինծառայությանը:

Վերջում ավելացնենք, որ «Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպությունը գործունեությունը սկսում է ընդլայնել նաեւ Արցախում: Այդ նպատակով կազմակերպության ղեկավարն ու մի քանի անդամները նոյեմբերի 27-29-ը այցելեցին Ստեփանակերտ, ուր հանդիպեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ղեկավարների, Աժ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի, հասարակական կազմակերպությունների, լրագրողների եւ այլոց հետ:

Այսպիսով, արդի փուլում եվրոպական ինտեգրացման ընթացքը դյուրին դարձնելու կարեւոր նախապայմանը հասարակության տեղեկատվության բարձրացումն է, ինչին պետք է միտված լինի թե պետական կառույցների, թե հասարակական կազմակերպությունների ու լրատվամիջոցների գործունեությունը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Ճանապարհային երթեւեկության անվտանգության հիմնախնդիրները

Հասարակական 5 կազմակերպություններ «Միլլեթ» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոնը (նախագահ Էդ. Հովհաննիսյան), Տպառողների բահերի պաշտպանության միությունը (Ա. Եղոյան), «Հակաստվեր» (Վ. Ամիրխանյան), «Ֆեմիդա» (Դ. Ամիրխանյան) եւ «Ասկլեպի» առողջության պահպանման կենտրոնը (Ա. Ավանեսյան), հանդես են եկել բաց նամակով՝ ուղղված ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին՝ պահանջելով անհապաղ լուծել ճանապարհային երթեւեկության անվտանգության հիմնախնդիրները, միաժամանակ հավաստիացնելով, որ իրենք պատրաստակամ են այդ գործում ամենայն աջակցություն տրամադրել:

Ընդհանուր օգտագործման երթուղային տրանսպորտի վերջին ողբերգական իրադարձությունը (2003 թ. 9 ամիսների ընթացքում միայն Երեւան քաղաքում ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը 2002 թ. նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 34-ով, իսկ մահացուների թիվը՝ 21-ով) մեկ անգամ եւս ապացուցեց, թե ինչ կարեւորություն ունի բնակչության կյանքն ու առողջությունը պահպանելու համար ճանապարհային երթեւեկության անվտանգության հիմնախնդիրների լուծումը:

Այդ նպատակով մենք առաջարկում ենք.

Շուտափույթ ընդունել «Ճանապարհային երթեւեկության անվտանգության մասին» ՀՀ օրենքը, վավերացնել «Ճանապարհային երթեւեկության մասին» Վիեննայի 1968 թ. միջազգային համաձայնագիրը, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրքը համապատասխանեցնել «վարորդ-պետավտոտեսչություն» փոխհարաբերությունների ներկայիս պահանջներին, ընդունել «Անկախ փորձաքննության մասին» օրենքը:

Նախակրթարաններում եւ հանրակրթական դպրոցներում վերականգնել ճանապարհային երթեւեկության կանոնների դասավանդումը:

Քաղաքացիներից տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու քննությունները, պետավտոտեսչության ճանապարհապարեկային ծառայության տեսուչների ատեստավորումը, ինչպես նաեւ տրանսպորտային միջոցների ամենամյա տեխնիկական զննությունն անցկացնել պետական եւ հասարակական կազմակերպությունների հսկողությամբ:

ՊԱՏ համակարգը անհրաժեշտ է գինել ճանապարհային երթեւեկության հսկողությունը իրականացնելու համար անհրաժեշտ սարքավորումներով (արագաչափեր, տեսագրող սարքեր, սթափության ստուգման խողովակներ եւ այլն):

Նպատակային պետական ծրագիր մշակել ճանապարհային ենթակառուցվածքները, ճանապարհային երթեւեկության կազմակերպումը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար:

Ապահովել ՊԱՏ համակարգի գործունեության հսկողություն եւ թափանցելիություն կոռուպցիոն երեւույթների իրական հաղթահարման նպատակով: Այս կապակցությամբ հուսով ենք, որ Դուք կապահովեք «Ճանապարհային երթեւեկության անվտանգության մասին» ՀՀ օրենքի նախագծի հասարակական քննարկումը:

Դեկտեմբերին օդի միջին ջերմաստիճանը նորմայից բարձր կլինի 1-2 աստիճանով

ԵՐԵՎԱՆ, 4 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Դեկտեմբերին օդի միջին ջերմաստիճանը, նախորդ ամսվա համեմատությամբ, կնվազի մոտ 6,5 աստիճանով. սպասվում է, որ այն կլինի 1-2 աստիճան նորմայից բարձր, տեղումների քանակը՝ նորմայից փոքր-ինչ ավելի:

Հայաստանի հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի պետական ծառայության տվյալներով, օդի միջին ջերմաստիճանը Մեղրիում եւ Արարատյան դաշտում կտատանվի +5 +7, Գեղարքունիքում, Շիրակում եւ լեռնային շրջաններում՝ -5 -10 աստիճանի սահմաններում:

Դեկտեմբերի երկրորդ կեսին կավելանա նաեւ տեղումների քանակը՝ ամսական կազմելով 35-40 մմ: Ամենաշատ տեղումներ կդիտվեն Լոռու եւ Տավուշի անտառային գոտիներում, Գեղարքունիքում եւ Գորիսում՝ 50-60 մմ, ամենաքիչը՝ Արարատյան դաշտում՝ 25-30 մմ:

Ըստ կանխատեսումների, ընթացիկ դեկտեմբերն անհամեմատ տաք կլինի անցածից, որի ջերմաստիճանը մոտ 8 աստիճանով ցածր էր բազմամյա միջինից:

Մինսկի խումբը տարածաշրջան է գալիս նոր գաղափարներով

Սկիզբը՝ էջ 1

«Համանախագահները բազմիցս հայտարարել են, որ այսպես կոչված նոր գաղափարները կներկայացնեն կողմերի ղեկավարությանը՝ մոտ օրերս տարածաշրջան նախատեսված իրենց այցի շրջանակներում: Այս պահին կարելի է միայն ենթադրություններ անել, թե ինչպանով են դրանք նոր: Ղարաբաղյան կողմը նոր գաղափարներին տեղյակ է այնքանով, ինչպանով մյուս երկու կողմերը: Հավանաբար, միջնորդներն իրենց ասելիքը հակված են ներկայացնել տեղում, ինչով էլ պայմանավորված է նրանց հերթական առաքելությունը Երեւան, Բաքու եւ Ստեփանակերտ», «Ազգին» տեղեկացրին ԼՂՀ ԱԳՆ մամլո ծառայությունից:

Ինչ վերաբերում է կարգավորման համար առավել նպաստավոր ժամանակահատվածի թեւակոխման մասին ամերիկյան համանախագահի ձեւակերպմանը, ապա տրամաբանորեն դա համապատասխանում է իրավիճակին, քանի որ անցնող տարվա բանակցային գործընթացը դանդաղեցնող ներքաղաքական զարգացումներն արդեն ավարտվել են, ասացին ԼՂՀ արտգործնախարարությունից:

«Սակայն այդ հանգամանքը չի կարող բավարար պայման լինել բանակցային գործընթացի ակտիվացման, առավել եւս՝ վերջնական կարգավորման համար: Անհրաժեշտ պայման է նաեւ կողմերի քաղաքական կամքի եւ կառուցողական մոտեցման առկայությունը, ինչը, սակայն, դատելով Ադրբեջանի նոր ղեկավարության վերջին հայտարարություններից, բացակայում է մեր ընդդիմախոսների մեջ: ԼՂՀ իշխանություններն իրենց պատրաստակամությունն են հայտնել լիիրավ մասնակցելու հիմնախնդրի կարգավորման բանակցություններին եւ կրել տարածաշրջանի անվտանգության ու կայունության համար պատասխանատվության իրենց բաժինը», նշեցին ԼՂՀ ԱԳՆ մամլո ծառայությունից:

Ադրբեջանում հայտնի քաղաքական վերլուծաբան Ռասիմ Մուսաբեկովն «Ազգի» հետ հեռախոսազրույցում նշեց, որ Բաքվում ԵԱՀԿ Մինսկի խմբի այցելությունից հեղափոխական փոփոխություններ չեն ակնկալում, եւ «այս այցից միջնորդների համար գլխավորը ղարաբաղյան բանակցությունները մեռյալ կետից առաջ շարժելն է»:

«Անցնող տարի Մինսկի խմբի գործունեությունը կաթվածահար էր: Ադրբեջանում եւ Հայաստանում իշխանությունները կայուն են եւ հնարավոր է դուրս գալ փակուղուց», ասաց նա:

Մուսաբեկովի կարծիքով, Բաքուն կարող է բանակցությունների մեջ մտնել Երեւանի եւ Ստեփանակերտի հետ առանձին-առանձին, բայց որոշակի խնդիրներ կարգավորելու շուրջ:

«Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի եւ անվտանգության երաշխիքների հարցով՝ Ստեփանակերտի հետ, իսկ Հայաստանի զավթած ադրբեջանական շրջանների հարցով՝ Երեւանի հետ», ասաց Մուսաբեկովը:

Մասսրիխտի ելույթում Գուլիեւը նշել էր, որ «Հայաստանի եւ Ադրբեջանի հակամարտությունը կարող է լուծվել միայն Ադրբեջանի տարածքային ամբողջականության հարգման հենքով», կոչ անելով Երեւանին ճանաչել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը «նրա անբաժանելի մասի՝ Լեռնային Ղարաբաղի հետ», «անվերապահ հայկական օկուպացիոն ուժերը դուրս բերել Ադրբեջանի տարածքից, ներառյալ ԼՂ շրջանը»:

Օսկանյանը Մասսրիխտի իր ելույթում նշել էր. «Այն դեպքում, երբ ԼՂ չկարգավորված հակամարտությունը հաճախ ներկայացվում է իբրեւ տարածաշրջանի անկայունության տարր, ինքը՝ ԼՂ-ն կայուն, կայացած միավոր է... Նրանք (ԼՂ հասարակությունը) ճաշակել են խաղաղությունը եւ կենտրոնացել տնտեսական զարգացման վրա: Դա քաղաքականապես հասուն մի հասարակություն է, որը գիտակցում է, որ իր կենսունակությունն ու լեգիտիմությունը բխում են իր գործնական եւ ակնառու նվիրվածությունից՝ հանդեպ այն կենսուղղի, որի համար պատերազմել են եւ հաղթել»:

Փերինան «Նեզավիսիմայա գազետային» տված հարցազրույցում նկատել էր, որ Ղարաբաղի, Աբխազիայի եւ Մերձդնեստրի հակամարտությունները տարբեր են (լուծում գտնելու տեսակետից), սակայն «պետք է հասկանալ, որ լոկալ հակամարտություններն արգելակում են հետխորհրդային պետությունների բնականոն զարգացումը»:

«Ղարաբաղյան խնդիրը տասը տարեկան է: Այս տարիների ընթացքում քննարկվել են բոլոր հնարավոր մոտեցումները: Սկզբունքորեն նոր լուծումներ պարզապես չկան. գոյություն ունեն հինգ-վեց միջ թե շատ ընդունելի տարբերակներ: Բայց եւ այնպես, փորձում ենք գտնել նոր մոտեցումներ, այդ խնդիրը դիտարկել այլ տեսանկյունից: Հենց այդ ուղղությամբ ենք աշխատում այս տարի, եւ, հնարավոր է, երեւան գան նոր գաղափարներ, բայց ոչ նոր առաջարկներ»:

Փերինան նշել է, որ ԱՄՆ-ն աջակցում է Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքին, սակայն «ԼՂ վերջնական կարգավիճակը պետք է մշակվի բազմակողմ բանակցությունների ընթացքում եւ ընդունելի լինի բոլոր կողմերի համար»:

ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահող պետություններից Ռուսաստանն անցնող շաբաթ ներգրավված էր ԼՂ բանակցային գործընթացում: Նախ՝ Գուլիեւը մեկնեց Մոսկվա, ապա՝ Բաքու ժամանեց ՌԴ առաջին փոխարտգործնախարար Վյաչեսլավ Տուրբինկովը, որին հաջորդեց Պուտին-Ալիեւ հեռախոսազրույցը:

ՌԴ նախագահը Մոսկվայում հյուրընկալեց Հայաստանի եւ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդներին, ապա Նեւա գետի ափին ղարաբաղյան խնդիրը քննարկվեց Քոչարյանի հետ հանդիպման ընթացքում:

ԱԶԳ

Հասարակություն

Երեւանում թափառող կենդանիները բազմանում են աղետալի արագությամբ: Դրանք ասիճանաբար գրավում են քաղաքի բոլոր թաղամասերը, վախեցնում ու սարսափահար անում մարդկանց:

Եվրոպացիները եթե իմանային, թե ինչպես ենք վարվում այս արարածների հետ, մեր պարտավորությունների մեջ հաստատապես կխցկեին նաեւ թափառողների հանդեպ մարդավայել վերաբերմունքի պահանջը, ոչ թե վարվել այնպես, ինչպես ընդունված է ոչ ասուններ միջավայրում: Հաստատապես կարելի է պնդել, որ մեր իշխանությունները գլխապատառ պարտաճանաչությամբ հլու կկատարեին այս մի պարտադրանքն էլ: Բայց այս հարցում եվրոպացիները վրիպել են, երբուղային տախտակների նման մի դժբախտ պատահար էլ

35 հազար դոլար թափառող շներին ոչնչացնելու համար...



չի եղել, որ «ամայեն» բնակչությունից ու ինչ-որ բան ձեռնարկեն: Խնդիրը գլխից լուծելու փոխարեն իրենց հանգույն, ժամանակավոր մի տարբերակ են ընտրել, բայց այս անգամ՝ աբորիգեններին վայել տարբերակ: Նույնիսկ հատուկ տենդեր է հայտարարվել գտնելու այն կազմակերպությանը, որն ավելի լավ կկատարի վայրենի այդ առաքելությունը: Շահել է «Դամիարգ» ՍՊԸ տարօրինակ անունով կազմակերպությունը: 35 հազար դոլար է հատկացվել թափառող կենդանիներին վերացնելու համար: «Դամիարգ»-ի փոխտնօրեն Համլետ Ադամյանը, որ նաեւ հնարած, բանկարժեք իրերի մի վաճառակետ ունի Շահումյան հրապարակից հիչ վերեւ, դեռ բողոքում է, որ ֆինանսավորումը կանոնավոր չի իրականացվում, եւ նոր խաղաքաղաքը նույնիսկ մի ամիս ընդհատեց իրենց աշխատանքները: Այդ 35 հազարն էլ չի բավարարի եւ չի բավարարում, որպեսզի ոչնչացնող խումբը 3 մեքենայով ու 3 որսորդներով ամեն գիշեր սպանդի ելնի Երեւանի փողոցները, որ բենզինն է թանկ, որ փամփուշտներն են թանկ, որ աշխատավարձը չեն կարողանում վճարել:

Ակնհայտ է, որ ինչպես շատ ապարեզներում, այստեղ էլ գործը հանձնվել է բանից անտեղյակ, ոչ պրոֆեսիոնալ մարդկանց ձեռքը, որոնք շներին ոչնչացնելուց զատ խնդրի լուծման այլ ուղի չեն տեսնում: «Որ թողնեն աշխատենք, պատահում է՝ ամիսը 600 շուն ենք սպանում», ափսոսանքով ասում է նա:

Հայաստանում այսօր հասարակական կազմակերպությունների թիվն արդեն հասել է 3 հազարի, բնապահպան կազմակերպություններինը՝ մոտ 100-ի: Սրանց շարքում ոչ մեկը չկա, որ զբաղվի ու կոչված լինի զբաղվելու այս դժբախտ կենդանիներին վիճակված ճակատագրով: Ստանձնելիք առաքելությունը հաճելիներից չէր լինելու եւ չէ, սեմինարներ ու ոչ ոքի պետք չեկող, մեկանգամյա օգտագործման գրքույկների ու զանազան այլ հրատարակություններ կազմակերպելով դրամաշնորհներ վայելելը նախընտրելի է: Սակայն Հայաստանում անկասկած կան մարդիկ ու մասնագետներ, որոնց հուզում է խնդիրը, ովքեր թափառողների կարգավիճակը փոխելու սեփական նախագծերն ու ծրագրերն են առաջարկել ե՛ւ տեղական իշխանություններին, ե՛ւ բնապահպանության նախարարությանը, սակայն անհասկանալի պատճառներով դուրս են մղվել: Եվ արդեն 10 տարի, որեւէ խելքին մոտ ու արդյունավետ ձեռնարկում չի իրականացվում, բարբարոս այս մեթոդից բացի:

Հակոբ Սանասարյան (Հայաստանի կանաչների միության նախագահ)- Մինչեւ մեկին չհոտոտեն, քաղաքային իշխանությունները տեղից չեն շարժվի: Մի քանի օր առաջ, բիոհիմիայի ինստիտուտի մոտ, հենց աստիճանների վրա երկու կնոջ էին արյունլվիկ արել: Մինչեւ հիմնարկ եմ հասնում, Մամիկոնյան փողոցից մինչեւ ինստիտուտ, 6 տեղ շների խմբերի եմ հանդիպում: Մարդիկ փոխում են ճամփաները՝ նրանց չհանդիպելու համար: Եվ մեկը չէ, որ հարձակվում է արդեն խմբերով են վրա տալիս: Մեր իշխանությունները հետ ուղի են գտել՝ գնդակահարել ու ոչնչացնել դրանց: Կարելի է հավաքել, գազանանոցին կից որեւէ շինություն ստեղծել, կերակրել ու կառավարել նրանց բազմացումը: Բնակչության շրջանում կրակոցներն անթույլատրելի են, եւ դա լուծման ճանապարհ չէ:

Սահակ Աբովյան (Երեւանի կենդանաբանական այգու տնօրեն)- Ինքս սկզբունքորեն դեմ եմ կենդանիների ոչնչացմանը: Մի քանի տարի առաջ ծրագիր էի մշակել, ֆինանսավորում չեղավ՝ ոչ Հայաստանում, ոչ էլ միջազգային կազմակերպություններից: Առաջարկում էի կացարաններ կառուցել, արուներին առանձնացնել կամ ամորձատել, եւ մի քանի տարվա մեջ նրանց քանակը կկրճատվեր: Հիմա մեծ վտանգ են ներկայացնում, եւ չոչնչացնելն է դարձել վտանգավոր: Այս կենդանիներին ոչնչացնելու կոչված կազմակերպությունը, իբրեւ գազանների կերակուր, հաճախ է մեզ առաջարկել դրանց միսը, բայց չստուգված, հիվանդությունների մեծ հավանականությամբ մսամթերքն ընդունել, կտրականապես հրաժարվել ենք: Վարակի տարածման աղբյուր են հենց մարդկանց համար: Մեզ հաճախ դիմում են նաեւ մարդիկ, ովքեր տանը ցեղական շներ ունեն, բայց չեն կարողանում պահել: Մենք էլ դրանց պահելու հնարավորություն չունենք: Եթե շների կացարան հիմնվի, նորմալ ծրագիր ու ֆինանսավորում լինի, այդ կենդանիների հարցն էլ կլուծվի: Կարելի է անվճար առաջարկել այն քաղաքացիներին, ովքեր ուզում են տանը կենդանիներ պահել:

Էդուարդ Յավրույան (կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Հայաստանի կենդանիների պահպանություն» միության նախագահ)- Մենք շատ ենք փորձել զբաղվել հենց թափառող կենդանիներով, բայց մեզ պարզապես մոտ չեն թողել՝ ասելով, թե խնդրով զբաղվող արդեն կա: Ժամանակին Վանո Սիրադեղյանը նույնիսկ հանդիպեց Կենդանիների միջազգային միության նախագահ Բրիջիդ Բարդոյի հետ, ստեղծվեց հատուկ կազմակերպություն «Պաշտպանենք թափառող կենդանիներին»: Արարատի շրջանում, Արտաշատի մոտ նախկին անասնաթափական գոմերը տրամադրել էին այդ նպատակին: Մեզ էլ, իբրեւ մասնագետների, տարան կարծիք հայտնելու, բայց դրանով էլ ամեն ինչ ավարտվեց: Քաղաքակիրթ աշխարհում ինկուբատորներ են ստեղծում, հավաքում են թափառող կենդանիներին, ախտահանում ու ստերիլացնում: Այսինքն՝ վիրաբուժական թեթեւ միջամտությամբ կենդանին զրկվում է սեռական ցանկությունից եւ այլեւս սերունդ չի տալիս: Վայրի կենդանիների պահպանությամբ զբաղվող մեր կազմակերպությունը տառացիորեն առանց ֆինանսի է գործում, միության անդամ գիտնականների միջոցների ու էնտուզիազմի շնորհիվ: Այդ 35 հազարով, որ տրամադրվել է շների ոչնչացմանը, պրոբլեմը հանգիստ կարելի է կարգավորել: 2-3 աշխատող է պետք դրա համար: Ստերիլացումը թանկ միջոցառում չէ, իսկ կենդանիներին կարելի է կերակրել սննդի օբյեկտների ուտելիքների մնացորդներով: Հիմա էլ շների մեծ մասը վխտում է ճաշարանների, մթերքի վաճառակետերի շուրջը:

Երբեմն կարծիքներ ես լսում, թե Հայաստանում այնքան խնդիրներ կան, որ այս մեկը կարեւորելը ծիծաղելի է: Բայց եթե պրոբլեմը հուզում ու վնասում է մարդկանց, ուրեմն առաջնային է: Նույնիսկ կենդանիներին վերացնելու գործընթացը վայրենու պես են անում: Որսորդական անաղմուկ փամփուշտներ չկան, ի դեպ, անհամեմատ էժան, որոնք միանգամից սպանում են, եւ ոչ թե տանջում խեղճ կենդանիներին:

Արդա Իսկոյան (Շրջակա միջավայրի պաշտպանության կենտրոնի նախագահ)- Բնակչության, հատկապես երեխաների աչքի առաջ թափառող կենդանիներին գնդակահարելը պարզապես վայրենություն է: Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի դրսեւորումները բերում են պատժելի են, եւ խնդրի լուծման այդ տարբերակը ոչ մի բարոյական նորմի չի համապատասխանում: Գիշերվա ժամը 12-ին կրակոցներ ես լսում: Ո՞վ է պատասխան տալու այն ահավոր սրեսների ու ծանր ապրումների համար, որոնց ենթարկվում են մարդիկ՝ կրակոցների ու գնդակահարվող շների կաղկանձյունների պատճառով: Աշխարհում վաղուց մշակված մեխանիզմներ կան, որոնք կարելի է մեզ մոտ էլ օգտագործել:

Թափառողներին ոչնչացնողների «աշխատանքը» «Դամիարգում» գործարքային է, ոչնչացված ամեն շան դիմաց (իբրեւ ապացույց ներկայացվում է սպանված կենդանու պոչը) վճարում են 2400 դրամ, իսկ դին նետում են Նուբարաշենի աղբավայր: Եվ արվածին համարժեք հաջորդ խնդիրն է ծագում: Այս կենդանիների ճակատագրին արժանացած, աղբը փորփրող թափառաշրջիկների մշտական խմբեր են ելուզուս անում աղբավայրում: Շների նեխած դիերը ես վարակի աղբյուր են ու վտանգավոր նրանց համար: Թե՞ այս մարդկանց էլ, հասարակության համար հանդուրժողականության ներքո, իշխանությունները թափառողների շարքին են դասել, ու եթե հնար լիներ, նրանցից ազատվելու նույն ճանապարհը կընտրեին:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՄԵՐ ԲԱԿԸ

Երեխաների խաղահրապարակը հարմար է... ավտոտնակի համար

Երեւանում քիչ են այն բակերը, ուր երեխաների համար նախատեսված խաղահրապարակներում իրենց պատվավոր տեղը չեն զբաղեցրել ավտոտնակները: «Բա մեքենաս ո՞ւր կանգնեցնեմ, այսպես ավտոտնակս աչքիս առաջ է, ապահով», ասաց մի բնակիչ: Բակից հեռանում էի, երբ նա 5-6 տարեկան որդուն նախատում էր փողոցում վազվզելու համար: Իսկ բակը հետեւյալ ձեւն ուներ. 7-8 մուտքից բաղկացած շենքից 10 մետր հեռավորության վրա ողջ երկարությամբ գույնզգույն ավտոտնակներն էին շարված: Դե, փոքրիկներ, խաղացեք այդ տարածքում: Բայց չմոռանաք, որ աղմկել չի կարելի՝ կխանգարեք հարեւաններին, գնդակ խաղալ չի կարելի՝ կջարդեք առաջին հարկի պատուհանները:



Երեւանյան բակերի կարգավիճակն այսօր միանշանակ որոշված չէ, պարզ չէ, թե ով է պատասխանատու դրանց հսկողության, բարեկարգման համար: Որոշ համայնքներում դրանք բաղաքապետարանի սպասարկման ոլորտում են, որոշներում՝ համաշիրությունների: Երեւանի քաղաքապետարանի կազմակերպատեսչական բաժնի պետի տեղակալ Արթուր Մկրտչյանը համաձայն է, որ սա օրենսդրական բաց է, պետք է ժամանակի ընթացքում կարգավորել: Նա բակերում կառուցված ավտոտնակների մասին ասաց. «Դրանք երբ կարգավիճակ ունեն՝ ինքնակամ շինություններ, որոնք օրինականացված չեն, քաղաքապետարաններին պատկանող ավտոտնակներ, որոնց օգտագործման համար բնակիչները վարձավճար են մուծում, եւ բնակիչների սեփական ավտոտնակներ, որոնց համար բնակիչները գույքահարկ են մուծում»:

Այս տարվա փետրվարից գործում է «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, ըստ որի նման կառույցների սեփականության իրավունքը կարող է ճանաչվել միայն այն դեպքում, երբ դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, չեն առաջացնում սերվիտուտ եւ չեն հակասում քաղաքաշինական նորմերին, իսկ քաղաքացիական օրենսգիրքը սերվիտուտը սահմանում է «ուրիշի հողամասից սահմանափակ օգտվելու իրավունք»: Սերվիտուտ կարելի է սահմանել այն դեպքում, երբ անհրաժեշտ է էլեկտրահաղորդման, կամի գծերի եւ խողովակաշարերի անցկացման ու շահագործման, ջրամատակարարման համար:

Ինքնակամ կառույցի նկատմամբ կառուցողի իրավունքը ճանաչվում է իր դիմումի եւ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա: Համայնքի ղեկավարի որոշումը կայացվում է օրացուցային 30 օրվա ընթացքում: Մերժման դեպքում կառուցողը պետք է 6-ամսյա ժամկետում քանդի կառույցը, հակառակ դեպքում քանդվում է հարկադիր կատարման կարգով, իսկ կառուցողը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:

Սակայն այս օրենքը տարածվում է միայն մինչեւ 2001-ի մայիսի 15-ը Անշարժ գույքի կադաստրում հաշվառված ինքնակամ կառույցների վրա: Մնացած դիմումների եւ հայտերի քննարկման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Այսօր այդ շինությունները դեռեւս հաշվառվում են:

Կա նաեւ բակերի մաքրության խնդիրը: Շենգավիթ համայնքի թաղամասերանի համաշիրությունները համակարգող Սուրիկ Կարապետյանն ասաց, որ համայնքի տրամադրության տակ են շենքը եւ շենքի չորս կողմի 1.5 մետր տարածությունը: Համաշիրությունները աղբահանությունը կազմակերպելու համար բնակիչներից ամսական 100-ական դրամ են ստանում, սակայն բակի մաքրության հարցը ոչ ոք չի լուծում: «Անհրաժեշտ է, որ բակը շենքի բնակիչներինը լինի, այն բնակիչներն են օգտագործում, կա դրա մաքրության անհրաժեշտությունը», ասաց պրն Կարապետյանը:

Արդեն մի քանի տարի Երեւանում իրականացվում է «Օրինակելի բակ» մրցույթը: Այս անգամ կազմակերպվել էր «Էրեբունի-Երեւան» միջոցառման շրջանակներում: Երեւանի տարբեր համայնքներից մրցույթի մասնակցելու համար դիմել էր 12 բակ, 2-ը հաղթող ճանաչվեց: Երկու դեպքում էլ աշխատանքներն իրականացրել են բնակիչները, անհրաժեշտության դեպքում թաղամասերանը օգնել է շինանյութերով:

Բակերից մեկը բարեկարգվել է ազատամարտիկ Վարդան Սամսոնյանի (Քյասիբ Վարդանի) նախաձեռնությամբ: «Բակում անկարգ վիճակ էր, ամեն մեկն իր համար ավտոտնակի, հողամասի տեղ էր առանձնացրել, - ասաց նրա կինը՝ Ռուզաննան: - Վարդանն անընդհատ ասում էր, որ պետք է մի բան անի, այսպես թողնել չի կարելի: Մի օր էլ առավոտը տեսնեմ՝ արդեն մի քանի հարեւանի համոզել է, աշխատում են»:

Բակը կանաչապատված է, տեղադրված են ծոծաղակներ: Վարդանը մի քանի անգամ եղել է Արեւմտյան Հայաստանում, այնտեղից քարեր բերել, բակում այդ քարերի մի փոքրիկ թանգարան են կառուցել: Ունեն եղեւնիների պուրակ, ուր ծառերն անվանակոչված են ազատամարտիկների անուններով: Բնակիչների կարծիքով՝ բակում ջերմություն կա: Մյուս բակը 4 շենքերի միջեւ է ընկած: Այստեղ աշխատանքները սկսվել են մոտ հինգ տարի առաջ: Խաղահրապարակից, ծոծաղակներից բացի բնակիչները խորհրդածանոց, բոնիր ունեն, որ օգտագործում են տարբեր միջոցառումների ժամանակ: «Չորս կողմի բակերում խաղահրապարակ չկա, ավտոտնակներ են, բայց մենք հենց սկզբից թույլ չտվեցինք, որպեսզի երեխաների համար տեղ պահել», ասաց բնակիչներից մեկը:

Հոգեբան Արմինե Հայրապետյանը գտնում է, որ երեխան զարգանում է՝ բավարարելով իր հետաքրքրասիրությունը: Քանի որ նախադպրոցական տարիքի երեխայի համար խաղը գործունեության հիմնական ձեւն է, առանց դրա նա չի կարող լիարժեք զարգանալ: «Բակային պայմաններում խաղը զարգացնում է երեխայի հենաշարժողական համակարգը, մտքի եւ մարմնի ներդաշնակ ճկունությունը, - ասաց նա: - Դրսում շփվելով երեխան դառնում է ինքնուրույն, սկսում է կառուցել իր եւ աշխարհի փոխհարաբերությունները»:

Այսօր այս խնդիրը ոչ իշխանությունները, ոչ էլ ծնողները չեն կարեւորում այնքան, որ լուծում ստանա, նման ծրագրերն էլ համընդհանուր բնույթ չեն կրում: Քանի դեռ այդպես է, երեխաները սահմանված են խաղալ իրենց ծնողների կողմից դեռեւս չզբաղեցված տարածքում՝ ավտոտնակների արանքներում:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

Եվրոպական հանձնաժողովի անդամ Վերհոգենը սպառնում է Թուրքիային

Թերեւս դրանով էլ Կիպրոսի հարցը շահարկելու նոր առիթ է տալիս

Երեկվա համարներում թուրքական կենսրոնական թերթերը հասուկենս բացառությամբ արձագանքեցին Եվրոպական հանձնաժողովի Եվրամիության ընդլայնման գծով պասասխանատու անդամ Գյունթեր Վերհոգենի նախորդ օրն արած հայտարարությանը: Այս հանձնաժողովը ԵՄ-ի գործադիր մարմինն է, նրա անդամներին Եվրախորհրդարանն է հաստատում: Ինչ վերաբերում է Վերհոգենին, ապա նա նաեւ Բելգիայի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ է:

Համենայն դեպս, Վերհոգենը հայտարարությամբ զգուշացրել էր, որ Կիպրոսի հիմնահարցի հանգեցումն անլուծելիության թանկ կարժենա Թուրքիայի համար: Տվյալ դեպքում խոսքը դեկտեմբերի 14-ին Կիպրոսի թուրքական հատվածում նախատեսվող խորհրդարանական ընտրությունների եւ դրանց հնարավոր արդյունքների մասին է: Ահա թե ինչ է ասել Գյունթեր Վերհոգենը դրանց առնչությամբ. «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությանն իբրեւ պետության ճանաչում է միայն Թուրքիան: Հետեւաբար այստեղ անցկացվելիք ընտրությունները նշանակություն կունենան միայն Թուրքիայի համար: Դրանք զուրկ են իրավական հիմքից, քաղաքական առումով որեւէ արժեք չեն ներկայացնի»:

Ակամա հարց է ծագում՝ ո՞ր դեպքում: Դրա պատասխանը միանշանակ է՝ նախատեսվող ընտրություններում Թուրքիայի դրածո Ռաուֆ Դենքթաշի հաղթանակի դեպքում: Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ Վերհոգենի հետեւյալ խոսքերին. «Ընդդիմության հաղթանակն ընտրություններին կտա ներուժ եւ արժեք կհաղորդի դրանց, քանի որ ընդդիմությունը Կիպրոսում լուծում է պահանջում եւ ձգտում է ԵՄ-ի մաս կազմել: Հիմնահարցի անլուծելիությունն իրավիճակը էլ ավելի կխճճի, առաջ կբերի իրավական նոր խնդիր: Թուրքիան Կիպրոսի Հանրապետությանը չի ճանաչում: Մինչդեռ նա շուտով անդամակցելու է ԵՄ-ին: Կղզում թուրքական զորքերի ներկայությունը հակասում է միջազգային իրավունքի նորմերին: Ուստի հիմնահարցը կլուծվի ի վնաս Թուրքիայի: Թուրքիան պետք է հասկանա, որ Հունաստանի կողքին նաեւ Կիպրոսն է ԵՄ-ին անդամակցում: Նրանք այստեղ կարող են համատեղ ջանքերով միջամտել ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության բանակցություններին»:

Անկախ Կիպրոսի հիմնահարցի կարգավորման ձգտումներից, այսպիսի դիրքերը Կիպրոսի թուրքական հատվածում:

Ակնհայտ էր, որ Դենքթաշի դիրքերի ամրապնդման պայմաններում միանշանակ ընդդիմությունն է թուլանում: Նա դառնում է խոցելի: Այդ ընթացքում պատասխանական Անկարան փոխանակ Կիպրոսի հիմնահարցի լուծումից խուսափելու համար բացատրություն տա, բացատրություն է պահանջում Վերհոգենից, որպեսզի կառչելով նրա հայտարարություններից հակասական բնույթից, անխնա շահարկի դրանք:

Կիպրոսի հիմնահարցի լուծմանը նպաստելու Վերհոգենի անկեղծությունը կասկած չի հարուցում: Բայց որ նրա հայտարարություններում բացակայում է հավաստիությունը՝ ակնհայտ է: Թերեւս այդ առումով պատահական չէին կենտրոնական թերթերի հարձակումները Եվրոպական հանձնաժողովի եւ ԵՄ-ի ընդլայնման գծով պատասխանատու անդամ Գյունթեր Վերհոգենի վրա, առավել եւս Թուրքիայի ղեկավարության բուռն հակազդեցությունը:

Օգտվելով առիթից նշենք, որ երբ թուրքական թերթերը պահանջում էին անհապաղ ազատել Վերհոգենին զբաղեցրած պաշտոնից, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը նրա հայտարարությունները վերագրեց ԵՄ-ին, ապա նկատի ունենալով Եվրոպական երկրները, ավելացրեց. «Իրենք գիտեն, մենք որեւէ խնդիր չունենք»: Նրան հետեւեց «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» նախագահ Ռաուֆ Դենքթաշը: Նա դատապարտելով Վերհոգենին, նրան համեմատեց սպասքի խանութ մտած փղի հետ: Ակնարկը հետեւյալն էր. Վերհոգենն այնպես տակնուվրա արեց Կիպրոսի հիմնահարցի կարգավորման գործընթացը եւ փոշիացրեց ծեռքբերումները, ինչպես փիղը փշրելով վաճառքի ենթակա սպասքը, տակնուվրա կաներ խանութը:

ՀԱԿՈԲ ՉԱԲԲՅԱՆ

Բաղդադի դատարանը Սադդամ Հուսեյնին ձերբակալելու հրամանագիր է ստորագրել

Բաղդադի շրջանային դատարանը Իրաքի նախկին նախագահ Սադդամ Հուսեյնին մեղավոր է ճանաչել սպանության փորձի մեջ եւ նրան ձերբակալելու կարգադրություն արել: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ 2003 թ. նոյեմբերի 21-ին Հուսեյնի դեմ հայց էր ներկայացրել Իրաքի կառավարական խորհրդի անդամ Իադ Ալլավին, որը գլխավորում է Իրաքի ազգային համաձայնության շարժումը: Այդ գործով որպես պատասխանող հանդես է գալիս նաեւ իրաքյան հետախուզության նախկին ղեկավար Ֆարուք Հիջազին:

Իադ Ալլավին երկրի նախկին նախագահին մեղադրել է, որ նա 1978 թ. մահափորձ է կազմակերպել իր դեմ: Ալլավիի խոսքերով, Լոնդոնում իր անցկացրած տարագրության ժամանակ Իրաքի հատուկ ծառայությունների գործակալներից մեկը ներխուժել է իր տուն եւ փորձել է կացնով սպանել իրեն եւ կնոջը:

Պատասխանողներ Հուսեյնի եւ Հիջազիի բացակայությամբ անցկացված դատական նիստում երկուսն էլ ճանաչվել են «պրոֆեսիոնալ մարդասպաններ, որոնց հարկավոր է ձերբակալել»:

Ավստրալիայում ձերբակալվել է «Ալ Ղաիդայի» հետ կապված առաջին կասկածյալը

Ավստրալիայում հակահաբեկչական պայքարի վերաբերյալ ընդունված նոր դաշնային օրենքին համապատասխան այդ երկրում ձերբակալվել է 20-ամյա մի անձնավորություն, որին կասկածում են «Ալ Ղաիդա» միջազգային ահաբեկչական ցանցի հետ կապված լինելու մեջ: CNN հեռուստաընկերությունը հաղորդում է, որ ինքության շահերից ելնելով ձերբակալված ավստրալացու անունը չի հրապարակվել:

Ոստիկանությունը պնդում է, որ կասկածյալը պատրաստվում էր ահաբեկչություն իրականացնել: Հաղորդվում է, որ երեկ նա առաջին անգամ ներկայացել է Սիդնեյի դատարան: Եթե մեղադրանքը հաստատվի, ապա ամբաստանյալը հեսագա ամբողջ կյանքը կանցկացնի բանտում:

Ոստիկանության ներկայացուցիչ էնդրյու Սցիպիոնեն հրաժարվել է ԶԼՄ-ներին հավելյալ մանրամասնություններ հայտնել, բայց ընդգծել է, որ ձերբակալվածի կասկածելի կապերի մասին հայտնի է «արդեն մի քանի տարի»: Նա ավելացրել է, որ տվյալ դեպքում գործը «շատ նուրբ» է, եւ դրա բոլոր առպագույցները «կներկայացվեն դատարանին»:

Ձերբակալման պահին կասկածյալից առգրավվել է մի քանի տետրերգ, որոնք պարունակում են արբազան պատերազմի՝ ջիհադի կոչեր: Ձերբակալությունն իրականացվել է Ավստրալիայի հակահետախուզության վերլուծաբանների, ոստիկանության եւ հատուկ ծառայությունների համատեղ ջանքերով:

ՆԱԵՎ ՏԻԵԶԵՐՔՈՒՄ

ԱՄՆ-ը մտադրվել է գերիշխանության հասնել տիեզերքում

Նախագահ Ջորջ Բուշի վարչակազմը դեկտեմբերի 17-ին հրապարակելու է մի զեկուցագիր, որտեղ շարադրված կլինի ԱՄՆ տիեզերական ծրագրի զարգացման հայեցակարգը: Այդ մասին հաղորդում է «Նեյշնլ ռիվյու օնլայն» ինտերնետային էջը:

Փորձագետները ենթադրում են, որ զեկուցագրում գլխավոր թեման ամերիկացիների օդաչուավոր տիեզերական թռիչքների վերսկսումն է: Դրանց մեջ կարեւորվում են դեպի Լուսին կատարվող թռիչքները: Ծրագրի նպատակներից մեկը հավանաբար դառնա Լուսնի վրա ամերիկյան մշտական տիեզերակայանի ստեղծումը: Ըստ այդմ «Նեյշնլ ռիվյուն» եզրակացնում է, որ ԱՄՆ-ի նպատակը տիեզերքում գերիշխանության հասնելն է:

Ըստ փորձագետների, դեպի Լուսին թռիչքները վերսկսելու եւ հետեւաբար ԱՄՆ օդատիեզերական գործակալությանը՝ NASA-ին հավելյալ գումարներ հատկացնելու օգտին գլխավոր փաստարկը դեպի Մարս թռչելու համար անհրաժեշտ հմտությունների ձեռքբերումն է եւ տեխնոլոգիաների զարգացումը:

Որոշ տվյալների համաձայն, դեպի Լուսին օդաչուավոր թռիչքը նախատեսված է իրականացնել մինչեւ 2019 թվականը: Փորձագետները նշում են, որ ամերիկացի աստղագնացների Լուսին վերադառնալն ամենաէժանը եւ ամենաանվտանգն է լինելու տիեզերական նոր ծրագրի նախագծերի մեջ:

Ի դեպ, նոյեմբերին Չինաստանը հայտարարել էր, թե մտադիր է մշակել տիեզերական նոր ծրագիր, որը թույլ կտա մինչեւ 2020 թվականը մարդ իջեցնել Լուսնի վրա:

Միաժամանակ Աստղագիտության պրեսիդենտական գործակալությունը հաղորդում է, որ Պենտագոնը պայմանագիր է ստորագրել «Նորթրոպ Գրումեն» ընկերության հետ, որը պարտավորվել է առաջիկա 8 տարում մշակել օդային պաշտպանության սկզբունքորեն նոր համակարգ: 4,5 միլիարդ դոլարանոց պայմանագրի համաձայն, մշակվող համակարգը թույլ կտա հակառակորդի հրթիռները կալանել դրանց արձակումից անմիջապես հետո:

Ենթադրվում է, որ հակահրթիռային պաշտպանության նոր համակարգի կալանիչ հրթիռները կտեղաբաշխվեն ինչպես ցամաքում, այնպես էլ ռազմանավերում եւ սուզանավերում: Նման համակարգի ստեղծումն արգելված էր հակահրթիռային պաշտպանության միջազգային պայմանագրով, որից ԱՄՆ-ը դուրս եկավ անցյալ տարի:

Ջոն Քերին խոստանում է նախագահ ընտրվելու դեպքում արմատապես փոխել ԱՄՆ քաղաքականությունը

Մասաչուսեթսի նահանգից ԱՄՆ նախագահության թեկնածու առաջադրված սենատոր Ջոն Քերին խոստացել է 2004 թ. նախագահ ընտրվելու դեպքում արմատապես փոխել երկրի արտաքին քաղաքականությունը:



Նյու Յորքում ելույթ ունենալով Միջազգային հարաբերությունների խորհրդում, Դեմոկրատական կուսակցությունից նախագահության գլխավոր թեկնածուներից մեկը համարվող Քերին հայտարարել է, թե ինքը «վերջ կդնի Ջորջ Բուշի ամբարտավան, անճարակ եւ անխոհեմ արտաքին քաղաքականությանը»:

Ջոն Քերիի խոսքերով, հանրապետականների ներկայիս վարչակազմը «արբած է ԱՄՆ-ի զորության գերազանցության գիտակցումից» եւ հաճախ միջազգային ասպարեզում անտեսում է մյուս պետությունների շահերը: ՌԻԱ գործակալությունը մեջբերում է սենատորի այն խոսքերը, որ թեեւ Սադդամ Հուսեյնի վարչակարգն արժանի էր տապալման, բայց նախագահ Բուշը տվյալ նպատակին հասավ վատթարագույն եղանակով՝ առանց ՄԱԿ-ի հավանության, առանց դաշնակիցների եւ խաղաղության հաստատման ծրագրի:

Քերին խոստացել է նախագահ դառնալու դեպքում լուծարել Իրաքի օկուպացիոն վարչակազմը եւ դրա լիազորությունները ՄԱԿ-ին փոխանցել ի դեմս ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի: 60-ամյա սենատորը, որը Վիետնամի պատերազմի վետերան է, նախատեսում է նաեւ ԱՄՆ-ում անցկացնել հակահաբեկչական գագաթաժողով եւ հավելյալ պատժամիջոցներ սահմանել ահաբեկչությունը հովանավորողների դեմ: «Հակահաբեկչական պատերազմը միայն ամերիկացիների գործը չէ: Դա ընդհանուր հակամարտություն է ողղարկված, մահացու վտանգավոր եւ բազմադեմ բնամոլ հետ: Որքան էլ հզոր լինենք, չենք կարողանա միայնակ հաղթել», հայտարարել է Ջոն Քերին:

Նա խոստացել է իր նախագահության առաջին 100 օրվա ընթացքում ԱՄՆ հատուկ ներկայացուցիչ նշանակել Մերձավոր Արեւելքում: Այդ պաշտոնի գլխավոր թեկնածուներն են նախկին դեմոկրատ նախագահներ Ջիմի Քարտերը եւ Բիլ Քլինթոնը, ինչպես նաեւ նախագահ Ջորջ Բուշ ավագի օրոք պետքարտուղարի պաշտոնն զբաղեցրած հանրապետական Ջեյմս Բեյքերը:

Ցարական պարտատոմսերի ֆրանսիացի տերերը տանուլ են տվել դատը

Նախահեղափոխական Ռուսաստանում թողարկված փոխառության պարտատոմսերի ֆրանսիացի տերերի ընկերակցությունը դատարանում տանուլ է տվել Ռուսաստանի կառավարության դեմ իր պահանջով հարուցված գործը: Փարիզի վերին ատյանի դատարանը չորեքշաբթի օրը որոշել է ննջարկման ենթակա չհամարել այն հայցը, որով ֆրանսիացի պարտատերերի ընկերակցությունը Ռուսաստանի կառավարությունից պահանջում է իրեն վճարել 337,8 մլն եվրո ընդհանուր գումարի փոխհատուցում:

Դատարանը նշել է, որ ՌԴ կառավարությունն իրավաբանական անձեռնմխելիություն ունի տվյալ հայցի առթիվ, ինչպես նաեւ պաշտոնական հիմունքներով մերժել է ներկայացված փաստաթուղթը: Վերջինս պարունակում է 500-ից ավելի ստորագրություն, բայց հայցին կից ներկայացված չէ ստորագրողների ցանկը:

Դատավճռում նաեւ նշվում է, որ Ռուսաստանի եւ Ֆրանսիայի կառավարությունների ստորագրած համաձայնագրին համապատասխան ռուսական կողմն արդեն 400 մլն դոլար է վճարել 1945 թվականից առաջ ծագած ունեցվածքային վեճերի կարգավորման նպատակով: Ֆրանսպրեսը տեղեկացնում է, որ ռուսական կողմի պաշտոնական դիրքորոշման համաձայն, տվյալ վճարումներից հետո ունեցվածքային պահանջների հարցը համարվում է փակված, եւ ցարական պարտատոմսերի ֆրանսիացի տերերը հետագայում պետք է բոլոր պահանջները ներկայացնեն արդեն Ֆրանսիայի կառավարությանը:

Առաջին անգամը չէ, որ ընկերակցությունը դատարանում տանուլ է տալիս Ռուսաստանի Դաշնության դեմ հարուցված գործերը, այդուհանդերձ շարունակում է հավելյալ փոխհատուցում պահանջել ՌԴ կառավարությունից:

Պ. Ռ.

Մշակույթ

Արտեմ Հարությունյանի պոետական Ավետարանը

Արտեմ Հարությունյանի «Նամակ Նոյին» (1997) բանաստեղծությունների ժողովածուին ես արձագանքեցի համառոտ մի բնութագրականով, թե հեղինակն ստեղծում է «20-րդ դարի «հոգեւոր դասության» առասպելը, վաղորդայնի նորոգության հուշերը տանելով դեռի դարաբաղյան գույների ու ձայների ընբոստ ժայթքումը, ուր տեսիլի ու հայտնության սվերագծերի հատույթը հասկանալի է դարձնում քաղաքական պոեզիայի վերածնունդը»: Քննադատությունը երեւույթն իմաստավորեց արդի հայոց բանաստեղծության զարգացման ուղիների տեսությամբ, ու Արտեմ Հարությունյանը չհապաղեց իր ներկայությունը հաստատելու մի նոր հայտնությամբ՝ հերթվածների մի ամբողջ մատյան՝ «Հուդայի արձակուրդը» ընդհանուր խորագրով: Միտում չունեմ հանգամանորեն անդրադառնալու պոետական այդ մատյանի վերլուծությանը եւ ենթադրում եմ, որ այն չի վրիպի քննադատների ուշադրությունից: Ասեմ միայն, որ նոր գրքի համեմատ «Նամակ Նոյին» ժողովածուն սոսկ նախերգանք կարող է համարվել: Երեւույթն ինձ պարզապես առիթ է տալիս վերսին մտորելու իրական մի առեղծվածի մասին, թե ինչ է կատարվում բանաստեղծության հետ: Իսկ որ ինչ-որ բան, իրոք, կատարվում է խոսքի հաղորդակցական այդ ձեւի ատպարեզում, միանգամայն ակնհայտ է եւ գիտականորեն քննելի: Դասական բանաստեղծությունը ենթակա էր պատմական ու գեղագիտական որոշակի համակարգի, որ միանգամայն ածանցելի է տեսականորեն: Արդի բանաստեղծությունը դուրս է ամեն մի համակարգից եւ տաղանդի «բնական կոչումից»:

Վերջերս «Дружба народов» ամսագրում տպագրված մի բանաստեղծություն գրավեց իմ ուշադրությունը: Այն կոչվում է «Живое сердце», որին հեղինակը՝ Վլադիմիր Գուբայլովսկին, անվանել է «Хроника прошедшего времени»: Ըստ ծավալի կարելի է այն պոեմ կոչել (ավելի քան 550 տող): Ըստ պատումի՝ չափածո նովել: Բայց դա պոեմ չէ ըստ կառուցվածքի եւ ոչ էլ չափածո նովել՝ ըստ սյուժեի: Այլ անուն չես տա դրան, քան բանաստեղծություն, ուր, սակայն, «խախտված» է ազատ տաղաչափության ամեն մի ձեւերը.

В субботу я пошел на стадион
На поле две столичные команды
в азарте закаличивали мяч,
то в левые, то в правые ворота.
Матч был отличный. Полтора часа
Я охал и ругался, и кричал,
наверно, что-то вроде: Федя дай!
Кудаж ты смотришь. Экая мазила.
Офсайд и чистый гол не засчитал...

Եվ այսպես, առօրյա ընկալումներից, ակամա վերհուշերից հյուսվում է անցնող օրվա ժամանակագրությունը, ուր հաստվում են առերեւույթ անկապակից կամ երեւակայությամբ ենթադրվող դիպվածներ: Ինչ-որ տեղ իրերի շարժանն ինքնաբերաբար է տալիս մի «ակնհայտ սոլիպսիզմ», թե «Наш мир зависит только от того, как мы с тобою смотрим на него»: Եվ այս հայտնությամբ դեպքերի դասավորությունը կարծես դառնում է բնական, փարատվում են կասկածները, իսկ կյանքի խճճված հարաբերությունները՝ հասկանալի: Կասեն, թե սա ամեն ինչ է, բայց ոչ բանաստեղծություն՝ եւ սակայն միմիայն բանաստեղծության ձեւերի այլաբանությամբ կարելի է արտահայտել «անցնող ժամանակի խրոնիկայի» փիլիսոփայական միտումը:

Թող անկապակից չթվա իմ այս անդրադարձը, քանզի հենց այստեղ է իմ հոդվածի իմաստը, ասելու համար, որ «Հուդայի արձակուրդով» Արտեմ Հարությունյանը 21-րդ դարին է հղում հայոց բանաստեղծության արվեստը:

«Հուդայի արձակուրդը» հերթվածներում Արտեմը ներհյուսում է քաղաքականությունն ու քաղաքակրթությունը, պատմությունն ու առասպելը, փիլիսոփայական խոհն ու օրերի ժամանակագրությունը, ազգի ճակատագրի ու մարդկության անկումի ողբերգական տագնապը.

Ես ասում եմ բոլորին, որ
ադոկալիպսիսը
Ահեղ դատաստանի ձեռքը
բռնած մոտենում է,
Իսկ քաղաքացիները քաղքենիների հետ
Քննարկում են երեկվա սերիալի
արտասվաթոր
պահերն ու կրծքի մեծությունը հերոսուհու:

Ժամանակացույց բանաստեղծություններ հայ հոգու եւ մարմնի, երեւան-Շուշի-Լոս Անջելես-Նյու Յորք-Վաշինգտոն-Ստեփանակերտ-Մոսկվա թափառող եսի

գաղտնի եւ բացահայտ արբշիռ խոստովանություններ, մոլորակի դժնի նորություններ մոլորյալ եւ ազնիվ հոգիների համար... քաղաքական ասք հրաշապատում-վերլիբրի պիրկ շարժման սուրխայթ ընչի տակ՝ հանուն անկախացող կյանքի ու հոգու մարմնավորման,- ավելի սպառիչ չես բնութագրի բանաստեղծությունների սույն մատյանը, քան հեղինակի ընծայականն է, առավել եւս եթե այն լրացնենք միջանկյալ-փակագծային մեկնությունների առարկայական հղումներով: Ըստ կառուցվածքի, այն բաղկացած է երեք մասից՝ «Հուդայի արձակուրդը», «Հայաստան՝ նորից անկախացող երկիր» եւ «Սիաբեկչության ծաղիկներ»: Այստեղ խորապես գիտակցված է պատմության ժամանակը եւ ժամանակագրության միացնող առանցքը՝ Արցախ-Հայաստան-Աբխազիա, որոնք սոսկ աբխազիագրական հասկացություններ չեն, այլ գաղափարայնացված խորհրդանիշեր եւ տիեզերական ժամանակի փիլիսոփայական վերլուծող հայացք: Ասված բանականությամբ սահմանել է արդարության ու ճշմարտության պատգամը բարոյականությամբ կրթելու մարդկությանը, որոնք, սակայն, օտարվել են՝ տեղի տալով մոլագար ձգտումների մղձավանջին.

Ո՞ւր մնաց ճշմարտությունը՝
Մենք օրեցօր համոզվում ենք,
Սոսկահար արթնանալով
մղձավանջի
փոխվող երազից,
որ Արդարությունը չէվել է, չկա,
եւ նրա մոռացված նմուշն այժմ
ընկած է բրիտանական բանգարանի ինչ-որ խոլորձներում:

Բանաստեղծը վերադարձի կոչ է հղում մարդկությանը՝ պոետական իր եսի մեջ բեկելով ճակատագրական փորձությունների դարավոր անեծքից ազգի փրկության աղերսը՝ Ես հայ եմ, հայրս Շուշիից է, մայրս՝ Բիթլիսից, եւ նրանք «ինձ սովորեցրել են կրկնել Նարեկացու տողերը՝ «Եվ հիմա որտեղից գտնենք մխիթարություն այսքան վշտերի համար»: Նարեկյան ողբը մի յուրահատուկ մոտիվ է գծում Արտեմ Հարությունյանի բանաստեղծական ավետարանում, անձնական կենսագրության հուշերով աղոթագիրք, որ ունի իր տաղաչափությունն ու գեղագիտական բանաձեւը՝ «հիմա, այս օրերին երգում եմ... տաղաչափության ձեւից՝ հանգից արտխառնության չափ զգված, էմիկական կտրուկ իմ վերլիբրի»: Այդ տաղաչափությունն սկիզբ ունի, բայց չունի ավարտ, ինչպես անավարտ են աղոթքն ու աղոթանքը: Դա այն է, ինչ կոչվում է «չընդհատվող պոեզիա» չընդհատվող զգայարաններով լսվող միակ ճիչը.

պոեզիա, որ ամրագրված է ամենուր,
Արցախի թթենու սաղարթի
պես շատրվանող
հզոր տեսիլքով,
ամենուր, ուր մարդը փորձում
է ապրել
պետության անհեթեթ ծախսերի
փտող բեռան տակ:
Պոեզիա, որ առանձին ձեւ է
քաղաքականության եւ
ֆանտաստիկայի
եւ երեւակայության
սուրաչվի ռենտգենի,
որ սփռում է ամեն ինչ
վերստեղծել նորից...

Այս հատվածը ես մեջբերում եմ հատկապես «քաղաքականություն» հասկացությամբ՝ ընդգծելու համար վաղուց մեր բանաստեղծությունից օտարված ձեւ-մոտիվի վերածնունդը Արտեմի պոեզիայում: Եվ զարմանալ կարելի է միայն, թե ինչելեկտուալ էներգիայի ինչպիսի անսպառ կարողությամբ է նա միացնում աբխարհընկալման իր անպարագիծ եզերը, երեւակայության թռիչքը բարձրացնելով միստիկական հուզավառության (էկզալտացիա) բանաստեղծական պատկերացումի: Այստեղ արդեն Արտեմը որոշակիորեն ընդլայնում է արդի հայոց բանաստեղծության աբխարհայացքը, իր տաղանդավոր գրչակից Դավիթ Հովհաննեսի բնութագրմամբ ասած՝ «Բանաստեղծություն՝ սահմանից անդին», խորապես գիտակցելով նորարարության այն կառույցը, ուր «ձեւը գոյություն ունի բովանդակության ու լեզվի մեջ»:

Կասեն, թե Արտեմ Հարությունյանի բանքերում ակնհայտ է ամերիկյան բանաստեղծության նմանակումը (իմիտացիա): Շարժե կասկածանքի ինչ-որ իմաստ որոնել այդտեղ, քանզի ամբողջ համաբխարհային բանաստեղծությունն ինքնին մի անընդհատ նախասկզբի իմիտացիա է: Իսկ Արտեմի պարագայում երեւույթը անհատապես ու կենսագրականորեն միանգամայն գիտակցված է: Նա, որ իբրեւ թարգմանիչ ու հետազոտող տիրապետում է ամերիկյան բանաստեղծության հետագծին՝ Ուիթմենից մինչեւ Գինսբերգ ու հետնորդները, կազմավորել է բանաստեղծության իր գիտությունը, ուր հատվում են ազգայինն ու ամերիկյանը: Նրա համար նախապես լուծված բանաձեւ է Ռալֆ Էմերսոնի հարցումը, թե «ինչո՞ւ մենք պետք է ունենանք ավանդույթի եւ ոչ թե ներթափանցման պոեզիա՝ ստեղծելու մեր օրերի համար կենսականորեն անհրաժեշտ ներթափանցման պոեզիա՝ Նարեկացու, Սիամանթոյի, Չարենցի, Սեւակի, Վարուժանի բանաստեղծության գեղարվեստական փորձի յուրացմամբ: Այստեղ է Արտեմ Հարությունյանի «Հուդայի արձակուրդը» հերթվածների պոետական հայտնությունը:

ՍԵՐԳԵՅ ՄԱՐԻԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՄԻՆ ԱՆԴԱՎԱՃԱՆ

Նա Հայաստանի երգչուհի է

1994 թ. Լոս Անջելեսի «Շրայն աուդիտորիում» համերգային դահլիճում տեղի էր ունենում «Բրավո, Արմենիա» տոնակատարության անդրանիկ համերգը: Վեց ու կես հազար հանդիսատես, հերթական կատարման ավարտից հետո մի պահ քար լռություն տիրեց եւ մի քանի ակնթարթ անց դահլիճը դղրդաց ծափահարություններից: Բեմի կենտրոնում կանգնած էր երգչուհի Հասմիկ Հացագործյանը, որը կատարել էր Վերդիի «Ճակատագրի ուժը» օպերայից Լեոնորայի մեներգը: Այդպես էր մեծ արվեստի հզոր ազդեցությունը հանդիսատեսի վրա:

Հաջորդ օրը հայկական մամուլում

այդ գալա-համերգի մասին հոդվածներում դրվատանքի խոսքերի զգալի մասն ասվում էր այդ կատարման մասին: «Նուրբ կատարում, բարձր երաժշտականություն, բանաստեղծականություն հիանալի տեխնիկայի հետ միասին»:

«Նա բացառիկ հմայիչ է, իր արվեստով, իր տաղանդով եւ վարպետությամբ կարողանում է գերել ունկնդրին՝ ստեղծելով իր շուրջը գեղեցկության եւ ուժի լուսապսակ»:

Դեռ մանուկ հասակից Հասմիկը գերել է մարդկանց իր բացառիկ երաժշտական տաղանդով: Սովորում էր Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի դաշնամուրի դասարանում եւ արդեն իսկ մանուկ հասակից ելույթներ ունենում մենահամերգներով, սպասվում էր, որ մոտ ապագայում կդառնա մենակատար դաշնակահար. մենահամերգներ սիմֆոնիկ նվագախմբի հետ չափազանց բարդ ծրագրերով՝ Բեթհովենի թիվ 3, Չայկովսկու թիվ 1, Ռախմանինովի թիվ 2 կոնցերտների կատարումներով: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվում է Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դաշնամուրային բաժինը, նորից մենահամերգներ, եւ շատերի համար անսպասելիորեն զուգահեռ ընդունվում է վոկալ բաժին: Սերը դեպի երգարվեստ Հասմիկի մեջ ծնվել էր մանկուց իր մորից՝ օպերայի թատրոնի մենեղգչուհի, վաստակավոր արտիստուհի Ելենա Միխայելյանի շնորհիվ, որի գրեթե բոլոր դերերգերը՝ Աիդա, Անուշ, Օլիմպիա, գիտեր երեխա հասակից: Հարկ է նշել, որ Հասմիկի դուստրը՝ Ելենա Գասպարյանը, նույնպես դաշնակահարուհի է դառնալու եւ նույնպես սեր ունի դեպի վոկալ արվեստը: Եվ այսպես, կայացած դաշնակահարը դառնում է երգչուհի: Իրար են հաջորդում երեք միջազգային մրցույթները՝ 1989 թ. Բրազիլիայում, 1990 թ. Պորտուգալիայում՝ Լուիզա Տոդիի անվան եւ 1991 թ. Իտալիայում Բելլինիի անվան, ուր Հասմիկը մեկնում է իր միջոցներով եւ վերադառնում դափնեկրի կոչմանն արժանացած: Դրանց նախորդել էին Գլինկայի անվան եւ Անդրկովկասի մրցույթները: Այս բոլորին հետեւում է տաղանդավոր երգչուհու ստեղծագործական բուռն ժամանակաշրջան Սոֆեդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնում: Նրա երգացանկը զարդարում են Ռոսինիի Ռոզինան, Վերդիի Վիոլետտան, Պուչինիի Տոսկան, Վերդիի Դեզդեմոնան, ինչպես նաեւ Միմի, Անուշ, Մոցարտի, Ֆորեյի, Վերդիի ռեքվիեմները եւ, իհարկե, Նարեկացի, Կոմիտաս եւ ի վերջո Հասմիկ Հացագործյանի ստեղծագործության փայլը հանդիսացող Դոնիցետտի «Պողիկտոս» օպերայից Պաուլինայի դերերգը, որն առանձնահատուկ փառք բերեց Հացագործյանին:

«Հայկական հրաշք Մեծ թատրոնի բեմի վրա» («Մոսկովսկայա գազետա»):

«Հասմիկ Հացագործյանի չլնող կատարմամբ Պաուլինայի դրամատիկ կերպարը երկար կմնա մոսկովյան հանդիսատեսի հիշողություններում» («Վեչերնայա Մոսկվա»):

«««Պողիկտոս» օպերայի ներկայացման գագաթնակետը հանդիսացավ Պաուլինայի դերերգի կատարումը Հասմիկ Հացագործյանի կողմից: Մարգարտյան լիրիկո-կոլորատուրային սոպրանո: Նրա ձայնի գեղեցկությունը, փայլուն տեխնիկան, վոկալ եւ դրամատիկական վարպետության համաձուլվածքը, գումարած արտիստականությունը, ցնցեց բոլորին՝ Մարիա Կալլասի ամենասիրած դերերգը կատարելիս»: «Իզվեստիա»:

Այսպիսի գնահատականներով մոսկովյան մամուլը նշեց Հասմիկ Հացագործյանի արվեստը:

Հասմիկ Հացագործյանն իր ստեղծագործական ծաղկման տարիքում է: Ցավոք, օպերային թատրոնի շենքի հիմնովին վերանորոգումն աննախադեպ դադար է տվել նրա բեմական գործունեությանը: Հասմիկը կարող էր շատերի պես լքել հայրենիքը եւ օտար ափերում շարունակել ստեղծագործել, մանավանդ այդ հնարավորությունն ուներ եւ ունի բազմաթիվ առաջարկություններ տարբեր թատրոններից, եւ դա կարելի կլինի հարգելի համարել: Հասմիկը մնաց Հայաստանում՝ երգելով հանրապետության մարզերի մեծ ու փոքրիկ դահլիճներում, արտասահմանյան հյուրախաղերին զուգընթաց: Նա մնաց Հայաստանի երգչուհի եւ հպարտ է այդ կացությամբ:

ՓԵԼԻՔՍ ԱՐԱՄՅԱՆ

ՁԱՊՐԱՆԿԱՐՅԻ ԱՉՔԵՐՈՎ



Մարզական

Ֆրանկֆուրտում կորոշվեն Հայաստանի հավաքականի մրցակիցները

Այսօր Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում տեղի կունենա ֆուտբոլի աշխարհի 2006 թ. առաջնության եվրոպական գոտու ընտրական մրցաշարի վիճակահանությունը: Այդ իրադարձությանն անհամբերությամբ են սպասում նաեւ հայ մարզասերները, քանի որ այսօր որոշվելու են Հայաստանի հավաքականի մրցակիցներն աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում, որի մեկնարկը կտրվի 2004 թ. աշնանը: Վիճակահանությանը մասնակցելու համար Ֆրանկֆուրտ են մեկնել ֆուտբոլի ՀՀ ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետյանը, գործադիր տնօրեն Արմեն Մինասյանը եւ ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Միխայ Ստոյկիցան:

Նախորդ տարիների համեմատ եվրոպական գոտու ընտրական մրցաշարը որոշ փոփոխության է ենթարկվել եւ անցկացվելու է նոր մրցակարգով: Վիճակահանությամբ ՈՒԵՖԱ-ի անդամ 51 երկրների հավաքականները (Գերմանիան որպես առաջնության կազմակերպիչ, ազատված է ընտրական մրցաշարից) կբաժանվեն 8 խմբի: Խմբերից 3-ում կընդգրկվեն 7-ական հավաքականներ, 5-ում՝ վեցական: Ընտրական մրցաշարի արդյունքներով խմբերի հաղթողները, ինչպես նաեւ 2-րդ տեղ գրաված հավաքականների մեջ լավագույն արդյունքի հասած երկու ընտրանիները եզրափակիչ փուլի ուղեգիր կնվաճեն: Մնացած 3 ուղեգրերն անցումային խաղերում միմյանց միջեւ կվիճարկեն 2-րդ տեղ գրաված մյուս հավաքականները: Այսպիսով, եվրոպան 2006 թ. Գերմանիայում կայանալիք ֆուտբոլի աշխարհի առաջնությունում ներկայացված կլինի 14 հավաքականով:

Բնականաբար, մինչ վիճակահանությունը հավաքականները բաշխվել են տարբեր զամբյուղների, որպեսզի խմբերի կազմերը հավասարազոր լինեն: Բաշխման համար հիմք են հանդիսացել աշխարհի 2002 եւ եվրոպայի 2004 թթ. առաջնությունների ընտրական մրցաշարերում հավաքականների ցուցանիշները: Այդ հանդիպումներում վաստակած միավորների ընդհանուր քանակը բաժանելով անցկացրած խաղերի թվի վրա, ստացվել է յուրաքանչյուր հավաքականի վարկանիշը: Հենց ելնելով վարկանիշից էլ, հավաքականները բաշխվել են ըստ զամբյուղների: Նման կարգով հաշվարկված վարկանիշային աղյուսակում ՀՀ հավաքականը 0,667 վարկանիշով 42-րդ տեղում է: Մեր ընտրանին ընդգրկվել է ցածր վարկանիշ ունեցող թիմերի շարքում՝ 6-րդ զամբյուղում: Եթե Հայաստանի հավաքականը վիճակահանությամբ ընդգրկվի այնպիսի խմբերում, որտեղ թիմերի քանակը 7 է, ապա 7-րդ զամբյուղում ընդգրկված ընտրանիներից մեկը կլինի մեր ֆուտբոլիստների մրցակիցը: Կարծում ենք, այս տարբերակն ավելի ձեռնտու է ՀՀ հավաքականին: Նախ, ընդհանուր խաղերի քանակը 2-ով ավելի շատ կլինի (իսկ ՀՀ հավաքականին անհրաժեշտ է մեծ թվով հանդիպումներ անցկացումը), ապա խմբում կլինի գոնե մեկ համեմատաբար թույլ մրցակից:

Նշենք, որ ամենաբարձր վարկանիշ ունեցող ութ հավաքականները, որոնք ընդգրկվել են առաջին զամբյուղում, վիճակահանությամբ գլխավորելու են ընտրական խմբերը: Նախապես որոշվել է, որ 1-3-րդ խմբերում ընդգրկվելու են 7-ական թիմեր, 4-8-րդ խմբերում՝ 6-ական: Ընդ որում, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի եւ Իսպանիայի հավաքականները պետք է գլխավորեն 6 թիմանոց խմբեր: Վիճակահանությամբ, սկզբում 7-րդ զամբյուղի 3 թիմերը կբաշխվեն 1-3-րդ խմբերում, այնուհետեւ հերթականությամբ կբաշխվեն մյուս զամբյուղների թիմերը: Նախապես որոշվել էր, որ վիճակահանության արարողությունը կասարելու են ավտարշավորդ Միխայիլ Շումախերն ու հանրահայտ պոպ-երգիչ Սթինգը: Սակայն վերջինս հրաժարվել է եւ նրա փոխարեն Ֆրանկֆուրտում վիճակահանությանը կմասնակցի իտալացի մրցավար Պիերլուիջի Կոլինան:

Իհարկե, մեր մարզասերներին նաեւ հուզում է այն հարցը, որ հանկարծ կրկին ուկրաինացիների հետ միեւնույն խմբում չընդգրկվեն: Ընտրական վերջին 4 մրցաշարերում Հայաստանի եւ Ուկրաինայի հավաքականները մշտական մրցակիցներ են եղել եւ կարելի է ասել, արդեն հոգնել են միմյանցից: Այնպես որ, երկու կողմն էլ այլեւս չի ցանկանում կրկին հանդիպել: Այս առիթով վերջերս կայացած մամուլի ասուլիսում Ռուբեն Հայրապետյանը նույնիսկ կասկածեց, որ Ուկրաինայի ֆեդերացիայի նախագահի հետ պետք է ամեն ինչ անեն, որպեսզի միեւնույն խմբում չընդգրկվեն: Ինչեւէ, քիչ ժամանակ է մնացել սպասելու: Այսօր հայտնի կդառնան ընտրական խմբերի կազմերը: Իսկ մենք ներկայացնում ենք վիճակահանությունից առաջ զամբյուղների կազմերը.

1-ին զամբյուղ	
Ֆրանսիա	3,000
Պորտուգալիա	2,400
Շվեդիա	2,389
Չեխիա	2,333
Անգլիա	2,313
Իսպանիա	2,313
Իտալիա	2,313
Թուրքիա	2,222
2-րդ զամբյուղ	
Հոլանդիա	2,167
Խորվաթիա	2,125
Բելգիա	2,063
Դանիա	2,056
Ռուսաստան	2,056
Իռլանդիա	1,944
Բուլղարիա	1,889
Սլովենիա	1,889
3-րդ զամբյուղ	
Լեհաստան	1,889
Ռումինիա	1,875
Շոտլանդիա	1,813
Սերբիա	1,722
Շվեյցարիա	1,611
Հունաստան	1,563
Ուկրաինա	1,500
Սլովակիա	1,500
4-րդ զամբյուղ	
Ավստրիա	1,500
Իսլանդիա	1,444
Ֆինլանդիա	1,375
Նորվեգիա	1,333
Բոսնիա	1,313
Իսրայել	1,313
Լատվիա	1,250
Ուելս	1,222
5-րդ զամբյուղ	
Հունգարիա	1,188
Վրաստան	1,063
Բելառուս	1,000
Կիպրոս	0,889
Էստոնիա	0,889
Հս. Իռլանդիա	0,778
Լիտվա	0,750
Մակեդոնիա	0,722
6-րդ զամբյուղ	
Ալբանիա	0,688
Հայաստան	0,667
Մոլդովա	0,667
Ադրբեջան	0,500
Ֆարերներ	0,444
Մալթա	0,111
Լիխտենշտեյն	0,063
Սան Մարինո	0,063
7-րդ զամբյուղ	
Լյուքսեմբուրգ	0,000
Անդորրա	0,000
Ղազախստան	0,000

Ֆրանսիացիները գլխավորեցին վարկանիշային ցուցակը

Թենիսի ֆեդերացիայի գավաթի նվաճման շնորհիվ Ֆրանսիայի կանանց հավաքականն այդ մրցաշարի մասնակիցների վարկանիշային ցուցակում 6-րդ հորիզոնականից տեղափոխվեց առաջին տեղը: 2-րդ հորիզոնականը զբաղեցնում են Սլովակիայի թենիսիստուհիները: Լավագույն հնգյակում են նաեւ բելգիացիները, ամերիկացիները եւ իսպանացիները: Ռուսաստանի ընտրանին, որը կիսաեզրափակիչում զիջել էր ֆրանսիացիներին, նահանջեց 6-րդ հորիզոնական: Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Իտալիայի, Ավստրիայի, Արգենտինայի եւ Գերմանիայի ընտրանիները:

Գիգզն ու Ռոնալդուն պատժվեցին

«Մանչեսթր յունայթեդի» խաղացողներ Ռայան Գիգզին ու Քրիսթիանո Ռոնալդուին Անգլիայի ֆուտբոլի ֆեդերացիան ենթարկել է դրամական տուգանքների՝ սեպտեմբերին «Արսենալի» հետ խաղում անվայելուչ պահվածքի համար: Ուելսի հավաքականի առաջատար Ռայան Գիգզը տուգանվել է 7,5 հազար ֆունտ ստեռլինգ, Ռոնալդուն՝ 4 հազար: Ժամանակին ֆուտբոլի ֆեդերացիան արդեն պատժել էր «Արսենալի» ֆուտբոլիստներին՝ նրանց տուգանելով 275 հազար ֆունտ ստեռլինգով:

Թուրքերը մեծ վնաս են հասցրել մարզադաշտին

Ինչպես տեղեկացրել ենք, ՈՒԵՖԱ-ի որոշմամբ չեմպիոնների լիգայի «Գալաթասարայ»-«Յուվենտուս» հանդիպումն անցկացվեց Դորտմունդի մարզադաշտում: Հանդիպմանը ներկա թուրք ֆանատները ոգեւորված իրենց թիմի հաջողությունից, խաղի ընթացքում եւ հանդիպման ավարտից հետո մեծ վնաս են հասցրել մարզադաշտին: Նրանք կոտրել են ավելի քան 100 նստատեղ, իսկ խաղի ավարտից հետո ներխուժել են նաեւ խաղադաշտ՝ մեծ վնաս հասցնելով նաեւ խոտածածկին: Այժմ «Գալաթասարային» դրամական խոշոր տուգանք է սպասում իր ֆուտբոլասերների անվայել վարքի համար:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայկոոպը հրավիրում է աճուրդի

Այն տեղի է ունենալու 2003 թ. դեկտեմբերի 18-ին, Հայկոոպի շենքում

Հասցեն՝ ք. Երեւան, Խանջյան 13

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Հ/հ	Վաճառվող գույքի անվանումը	Հասցեն գտնվելու վայրը	Վաճառքի մեկն. գինը (հազ. դրամ)	Աճուրդի մասնակց. վճարի չափը (հազ. դրամ)
	Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանում			
1.	Ռեստորան «Երեւան»	ք. Ստեփանավան	1200.1	60.0
2.	Ճաշարան իր գույքով	գ. Կուրթան	644.1	32.0
3.	Ճաշարան իր գույքով	գ. Լոռի-Բերդ	843.7	42.0
4.	Ճաշարան իր գույքով	գ. Սվերդլով	415.1	21.0
5.	Ճաշարան իր գույքով	գ. Ուռուտ	562.1	28.0
6.	Ճաշարան տաղավար իր գույքով	գ. Գյուլագարակ	274.2	14.0
	Գուգարքի տարածաշրջանում			
7.	«Վաղինակ» ճաշարան իր գույքով	գ. Լեռնոտով	956.5	48.0
8.	«Արարատ» ճաշարան իր գույքով	գ. Լեռնոտով	1534.5	77.0
9.	«Տուրիստ» ճաշարան տաղավար իր գույքով	գ. Մարգահովիտ	306.0	15.0

Աճուրդը կայանալու է դասական եղանակով:
Աճուրդին մասնակցել ցանկացողները մինչեւ 2003 թ. դեկտեմբերի 17-ը ժամը 16:00 աճուրդային հանձնաժողովին պետք է ներկայացնեն՝
- աճուրդին մասնակցության հայտը,
- աճուրդին մասնակցության վճարի անդորրագիրը:
Մուտքագրման հաշիվն է՝
23802607570100, «Առէկսիմբանկ»
Մանրամասն տեղեկությունների համար դիմել աճուրդային հանձնաժողովին, հեռ.՝ 54-15-01

Առաջատարներն ի հայտ են եկել

Խորվաթիայում ընթացող ձեռքի գնդակի աշխարհի կանանց առաջնությունում կայացան 2-րդ տուրի հանդիպումները: «Բ» խմբում հանդես եկող Ռուսաստանի հավաքականը բավական դժվարին մրցախաղում հաղթեց Անգլիայի ընտրանուն (26-22): Մեկնարկն անհաջող դասավորվեց ռուսների համար, որոնք 6 անպատասխան գնդակ ընդունեցին սեփական դարպասը: Մինչեւ ընդմիջում ռուսներին հաջողվեց հաշվի մեջ առաջ անցնել (12-11):

Երկրորդ խաղակեսում, ավելացնելով ճնշումը մրցակցի դարպասին, Ռուսաստանի հավաքականը խաղը հասցրեց հաղթական ավարտի: «Բ» խմբում իր երկրորդ հաղթանակը տոնեց նաեւ Ավստրիայի հավաքականը՝ պարտության մատնելով ուրուգվայցիներին (47-20): 3-րդ տեղում չեխերն են, որոնք պարտվեցին Հարավային Կորեայի ընտրանուն (18-31):

«Ա» խմբում 4-ական միավորով առաջատարի դերը ստանձնել են Խորվաթիայի եւ Ֆրանսիայի հավաքականները: Խորվաթները հաղթեցին ավստրալացիներին (38-12), ֆրանսիացիները՝ բրազիլացիներին (33-15): «Գ» խմբում նույնպիսի ցուցանիշ ունեն ճապոնուհիները, որոնք հաղթեցին արգենտինացիներին (24-16): Մյուս հանդիպումներում գրանցվել են հետեւյալ արդյունքները. Ուկրաինա-Ռումինիա՝ 26-28, Թունիս-Նորվեգիա՝ 25-27: «Դ» խմբում 4 միավոր է վաստակել Սլովենիայի ընտրանին, որը պարտության մատնեց Կոտ դԻվուարի հավաքականին (32-28): Խմբի մյուս հանդիպումներում գրանցվել են այսպիսի արդյունքներ. Գերմանիա-Հունգարիա՝ 30-27, Չինաստան-Դանիա՝ 20-29:

Հաջողությունը գնահատվեց 90 հազար դոլար

Լատվիայի կառավարությունը որոշում է ընդունել երկրի ֆուտբոլի ֆեդերացիային հատկացնել 50 հազար լատ (մոտ 90 հազար դոլար) ազգային հավաքականի ֆուտբոլիստներին ու մարզիչներին պարգեւատրելու համար, որոնք եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգիր են նվաճել: Սկզբնական շրջանում նախատեսվում էր պարգեւատրման համար հատկացնել տրված գումարից 2-3 անգամ ավելի գումար: Սակայն Լատվիայի ֆուտբոլի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Յանիս Մեժեցկին հայտարարել է, որ այդ գումարը կհատկացվի երկրում մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման համար, իսկ ֆուտբոլիստներին ու մարզիչներին պարգեւատրելու համար կօգտագործվի ՈՒԵՖԱ-ի կողմից եզրափակիչ մտնելու համար երկրի ֆեդերացիային հատկացվելիք գումարի մի մասը:

Մարզիկներին ցմահ որակազրկում է սպառնում

Տարբեր երկրներում, մարզական տարբեր ֆեդերացիաներում գնալով ուժեղանում է պայքարն արգելված խթանիչների դեմ: ԱՄՆ-ի թեթեւատլետիկայի ֆեդերացիայի տնօրենների խորհրդի որոշմամբ ցմահ կորակազրկվեն երկրի այն մարզիկները, որոնք արգելված խթանիչներ կօգտագործեն: Ընդ որում, նման պատիժ է սպասվում նաեւ այն մարզիկներին, ովքեր առաջին անգամ են դոպինգ օգտագործել: ԱՄՆ-ի հակադոպինգային ծրագրում նմանատիպ պատիժներ են նախատեսված նաեւ մարզիչների, բժիշկների համար, որոնց սաներն արգելված խթանիչներ են օգտագործել:

8 մլն ֆունտ Ֆրեյի համար

«Չելսին» «Պարմային» 8 մլն ֆունտ ստեռլինգ է առաջարկում իտալացիների դարպասապահ Սեբաստիան Ֆրեյին գնելու համար: Նշենք, որ լոնդոնցիները Ֆրանսիայի դարպասապահով հետաքրքրվում էին դեռեւս անցյալ ամռանը: «Պարմայի» ղեկավարությունն առայժմ կոնկրետ պատասխան չի տվել Աբրամովիչի առաջարկին: Ենթադրվում է, որ եթե «Պարման» իրավունք ստանա մասնակցելու չեմպիոնների լիգայի մրցաշարին, ապա տրանսֆերը չի կայանա:

Էջը պատրաստեց
ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ–2020
ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԸ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ

«Հայաստան 2020» հասարակական ոչ առեւտրային ծրագիրը հայտարարում է մրցույթ հետեւյալ նոմինացիաներում.

1. **Ակնարկ** — **1,000.00 ԱՄՆ դոլար**
2. **Հոդվածների / հրապարակումների շարք** — **2,000.00 ԱՄՆ դոլար**
3. **Տեսաձայնարձակների / հեռուստատեսային թոք-շոուների շարք** — **3,000.00 ԱՄՆ դոլար**
4. **Սցենար** — **5,000.00 ԱՄՆ դոլար**

Մենք փնտրում ենք նոր ինքնատիպ պատկերացումներ այն մասին, թե ինչպիսին կլինի Հայաստանը 20 տարի անց: Մրցույթին ներկայացվող ակնարկը, հոդվածը, հեռուստաշոուն կամ սցենարը պետք է պատկերի կամ նկարագրի սովորական հայ մարդու առօրյան մոտ ապագայում այն փոփոխությունների ներքո, որոնք հավանական են պետության տնտեսական, քաղաքական, հասարակական, մշակութային, կրոնական ոլորտներում արտաքին եւ ներքին փոփոխությունների շնորհիվ: Ներկայացվող բոլոր նյութերը պետք է հիմնվեն «Հայաստան 2020» ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությունների արդյունքների եւ մշակված 4 հիմնական սցենարների վրա: Նշված նյութերը տեղադրված են ծրագրի ինտերնետային էջում՝ www.armenia2020.org, հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով:

Պահանջներ եւ կանոններ

Ընդհանուր պահանջներ.

- Նյութերը կարող են ներկայացվել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով, հայ կամ օտարերկրյա անհատների, հայկական կամ օտարերկրյա կազմակերպությունների, Հայաստանի քաղաքացիների եւ արտասահմանցիների կողմից;
- եթե նախքան մրցույթին մասնակցելը նյութն արդեն տպագրվել, հրատարակվել կամ հեռարձակվել է, ապա ներկայացված նյութում պարտադիր պետք է նշվի լրատվամիջոցի անվանումը, հրատարակման կամ հեռարձակման ամսաթիվը, տպագրված նյութի վերնագիրն ու համարը;
- «Հայաստան 2020» ծրագիրն իրավունք է վերապահում ընդունելու, մերժելու եւ խմբագրելու մրցույթին ներկայացված նյութերը;
- Ներկայացված նյութերը չեն վերադարձվելու;
- Մրցանակները չեն կարող փոխանցվել այլ անձանց;
- Ստացված նյութերի բովանդակությունը ենթակա չէ քննարկման դիմորդի եւ ծրագրի ներկայացուցչի միջեւ;
- Պլագիատի հայտնաբերման դեպքում նյութը չի ընդգրկվելու մրցույթում: Բոլոր հղումները պետք է պահպանվեն եւ ներկայացվեն;
- Ներկայացվող նյութը պետք է լինի բնօրինակ, նրանում ընդգրկված փաստերը՝ ստույգ եւ ճշված: Նյութի հրապարակումը չպետք է խախտի որեւէ անհատի կամ կազմակերպության հեղինակային իրավունքը;
- Բոլոր ներկայացված նյութերը եւ դրանց հրապարակման իրավունքը պատկանում է «Հայաստան 2020» ծրագրին: Նյութերը կարող են օգտագործվել, խմբագրվել եւ մեջբերվել գովազդային կամ այլ նպատակներով, ներառյալ՝ տեղադրվել ինտերնետային էջի վրա (www.armenia2020.org) առանց հեղինակների համաձայնության կամ դրամական պարգեւատրման: «Հայաստան 2020» ծրագիրն իրավունք է վերապահում օգտագործելու մրցույթի հաղթող ճանաչված անձանց կամ կազմակերպությունների անուններն ու հասցեները մրցույթին առնչվող գովազդային նյութերում, առանց զգուշացման, հեղինակի թույլտվության կամ դրամական փոխհատուցման, բացառությամբ այն դեպքերի, երբ դա արգելված է օրենքով;
- «Հայաստան 2020» ծրագիրն իրավունք է վերապահում փոփոխելու, լրացնելու կամ չեղյալ համարելու մրցույթի կանոնները անհրաժեշտության դեպքում:

Ա. Ակնարկ

- Մրցույթին կարող են մասնակցել 2003թ. նոյեմբերի 1-ի դրությամբ 16 տարեկան բոլոր անձինք; նախընտրությունը տրվելու է ԲՈՒՀ-երի ուսանողներին եւ ասպիրանտներին;
- Ակնարկը պետք է պարունակի ոչ ավել քան 1500-2500 բառ (3-5 էջ, առաջարկվող տառատեսակը՝ Times New Roman 12);
- Ակնարկին կից առանձին էջի վրա պետք է նշվի հեղինակի անունը, տարիքը, ուսումնական հաստատության հասցեն ու բաժինը, ինչպես նաեւ հեղինակի հասցեն ու հեռախոսահամարները;
- Ընդունվում են նաեւ մեկից ավելի հեղինակ ունեցող նյութեր:

Բ. Հոդված/հրապարակումների շարք

- Մրցույթին կարող են մասնակցել լրագրողներ, որոնք աշխատում են լրիվ կամ կես դրույքով որեւէ հայկական կամ արտասահմանյան օրաթերթում, ամսագրում, խմբագրությունում, ինտերնետային ամսագրում: Կարող են դիմել նաեւ անկախ լրագրողներ;
- Հոդվածը կարող է նախկինում հրապարակված լինել գրքում, այլ տպագրանյութում կամ ինտերնետում:
- Նյութին կից առանձին էջի վրա պետք է ներկայացվի հեղինակի անունը, հասակը, հասցեն, հեռախոսի համարը, էլ. փոստի հասցեն, նախկին տպագրման ամսաթիվը, տպագրված նյութի անունը եւ պարբերականի անունը:

Գ. Տեսա ռեպորտաժների/թոք շոուների շարք

- Մրցույթին կարող են մասնակցել ընկերություններ կամ անհատներ, որոնք աշխատում են լրիվ կամ կես դրույքով հեռուստատեսության ոլորտում Հայաստանում կամ արտասահմանում;
- Տեսա ռեպորտաժները/թոք շոուները կարող են նախկինում ցուցադրված լինել ցանկացած հեռուստալիքով, Հայաստանում կամ արտասահմանում;
- Ներկայացվող նյութերի ծավալը չի սահմանափակվում;
- Նյութերը պետք է ներկայացվեն NTSC/PAL ֆորմատով, VHS, DVD կամ CD-ROM(PC) կրիչներով;
- Ներկայացված հոլովակները, դիսկերը, պետք է ունենան պիտակ, որի վրա նշված պետք է լինի նյութի անվանումը, հեղինակի անունը, հասցեն, հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն, եւ նախկինում ցուցադրման դեպքում՝ ցուցադրման տվյալները:

Դ. Սցենար

- Մրցույթին կարող են մասնակցել ընկերություններ կամ անհատներ, որոնք աշխատում են լրիվ կամ կես դրույքով հեռուստատեսության ոլորտում Հայաստանում կամ արտասահմանում, կամ այլ հեղինակներ/գրականագետներ/լրագրողներ;
- Սցենարը կարող է պատրաստ լինել դերակատարների եւ նկարահանող խմբի կողմից որպես վերջնական ուղեցույց օգտագործվելու համար;
- Սցենարների հետ պետք է ներկայացվի հակիրճ ամփոփագիր (1 կամ 2 էջ), որտեղ պետք է մանրամասն ներկայացվեն նկարահանման վայրի, դերակատարների եւ սցենարային պատմության մասին տվյալները;
- Սցենարները պետք է լինեն դիմորդների սեփական աշխատանքը: Եթե սցենարները հիմնվում են ադապտացված նյութերի վրա, որոնք չեն հանդիսանում հասարակական օգտագործման առարկա, ապա դիմորդը պետք է ներկայացնի վկայություն այդպիսի ադապտացիաներ կատարելու իր իրավունքի մասին;
- Սցենարները չպետք է նախկինում վաճառված, գնված կամ արտադրված լինեն;
- Ընդունվում են սցենարներ ֆիլմի ցանկացած ժանրի համար (պատմողական, վավերագրական, անիմացիոն, եւ այլն):

Մրցույթի մասնակիցները սույնով համաձայնում են, որ ներկայացված աշխատանքները չեն խախտում ՀՀ կամ այլ երկրի օրենքների պահանջները հեղինակային իրավունքի եւ արտոնագրերի մասին, չեն պարունակում որեւէ նյութ որը կարող է հիմք հանդիսանալ «Հայաստան 2020» ծրագրի դեմ իրավունքների խախտման վերաբերյալ հայցերի, որպիսի վճռման հայցերի կամ պայմանագրերի խախտման հայցերի ներկայացման համար, կամ ցանկացած այլ պահանջների կամ հայցերի ներկայացման համար: Մասնակիցները սույնով համաձայնում են, որ նրանք տրամադրված նյութերի հանդեպ ունեն բացառիկ իրավունք ե ներկայացնելու այդ նյութերը «Հայաստան 2020» ծրագրին: Մասնակիցները սույնով անվերապահորեն համաձայնում են զերծ պահել «Հայաստան 2020» ծրագիրը, նրա հանձնակատարները, աշխատակիցներին, մրցույթի վերաբերյալ վճիռ կայացնող անձանց, գործընկերներին ցանկացած եւ բոլոր պահանջներից, հայցերից, բողոքներից, գործողություններից, պարտավորություններից, դատական վարույթներից, կորուստներից, ծախսերից ներառյալ իրավական ծախսերը, որոնք կարող են առաջանալ ցանկացած եւ բոլոր հայցերից կամ երրորդ անձանց կողմից ներկայացված հայցերից տրամադրված նյութերի վերաբերյալ: Մասնակիցները սույնով ընդունում են, որ սույն մրցույթի կազմակերպիչները չեն կարող պատասխանատու լինել ներկայացված նյութերի անզգույշ վնասի կամ կորուստի համար: Վնասի կամ կորուստի դեպքում «Հայաստան 2020» ծրագիրը, իր կազմակերպիչները եւ հովանավորները պատասխանատու չեն: Մասնակիցները սույնով ընդունում են, որ «Հայաստան 2020» ծրագիրը կարող է ներկայացնել նյութերը եւ/կամ դրանց հատվածները հանրային տեղեկատվության եւ տարածման նպատակներով եւ/կամ հրապարակել եւ տարածել ներկայացված նյութերը համաձայն վերը նշված պայմանների:

Բոլոր նյութերը պետք է ստացված լինեն «Հայաստան 2020» ծրագրի կողմից (Փոստային արկղ «Հայաստան 2020», Ֆեդէքս, Մաշտոցի փ. 40, բն. 35, 375009, Երեւան, ՀՀ կամ էլ. փոստ. award@armenia2020.org) ոչ ուշ քան 2004թ. մարտի 31-ը: Նյութերը անձամբ առաքելու դեպքում կարող եք պահանջել ստացական: Մրցույթի արդյունքների մասին տեղեկացվելու են միայն հաղթողները:

AMERICAN EMBASSY, YEREVAN INVITES YOU TO PARTICIPATE

in ***Auction*** (open bid, classic) of office and household furniture, appliances and equipment, computers and accessories/ peripherals, generators, and other assorted items. The sale will be conducted in the Embassy Warehouse, at 90 Araratian str., Charbakh district, on December 14, 2002, 10 a.m. until 6:00 p.m. local time.

The inspection of items may be done at the sale site for free on Saturday, December 13, from 10:00 AM - 6:00 PM local time, and you will be provided with a list of lots and detailed instruction and terms of auction. The lots will be sold as is, where is **(the U.S. Embassy will not guarantee the quality of the merchandise).**

Individuals/Physical entities, who are not entitled to receive duty-free diplomatic purchases will be responsible for payment of all taxes and customs fees to the appropriate Armenian authorities.

Contact persons for auction are:
Robert Crook:
phone 09 430 815
Hrach Asoyan:
phone 09 406 986

ԵՐԵՎԱՆՈՒՄ, ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՁԵԶ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

Գրասենյակային եւ տան համար նախատեսված կահույքի, տնտեսական ապրանքների եւ սարքերի, համակարգչային տեխնիկայի եւ օժանդակ սարքավորումների, գեներատորների եւ այլ ապրանքների աճուրդին (բաց/դասական):

Աճուրդը տեղի կունենա դեկտեմբերի 14-ին ժամը 10:00-18:00, դեսպանատան պահեստում, որը գտնվում է Արարատյան 90 հասցեում:

Ապրանքները կարող եք գնել աճուրդի վայրում, դեկտեմբերի 13-ին, ժամը 10:00-18:00: Ապրանքների գնումն անվճար է եւ դուք կստանաք աճուրդի անցկացման մանրամասն պայմանները ու վաճառվող ապրանքների խմբավորված ցուցակները:

Ապրանքները կվաճառվեն «այնպես, ինչպես կան» (Դեսպանատունը պատասխանատվություն չի կրում ապրանքների որակի համար):

Անձինք, ովքեր գնումներ անելիս ազատված չեն հարկերից եւ մաքսավճարներից, պատասխանատու են իրենց հարկային եւ մաքսային վճարումների համար Հայկական պետական համապատասխան մարմիններին:

Աճուրդի հետ կապված տեղեկությունների համար զանգահարել՝

Ռոբերտ Քրուկին 09 430 815
Հրաչ Ասոյանին 09 406 986

ARMENTEL
WE CREATE FUTURE TOGETHER

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի լրումն Արմենտել ՀՁ ՓԲԸ-ի 2003 թ. հոկտեմբերի 10-ի նոր բջջային միացումների տրամադրման վերաբերյալ հայտարարությանը, հայտնում ենք, որ այն ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ովքեր 2003 թ. նոյեմբերի 18-ից Արմենտել ՀՁ ՓԲԸ միայն մարզային բաժանորդային սպասարկման բաժիններում ներկայացրել են դիմումներ բջջային պայմանագրային կապուղիներ (SIM fars) ձեռք բերելու համար, կարող են դրանք ստանալ սկսած 2003 թ. դեկտեմբերի 8-ից:

Վերոհիշյալ անձինք պետք է այցելեն Արմենտել ՀՁ-ի մարզային բաժանորդային սպասարկման բաժիններ, որտեղ նրանք ներկայացրել են դիմումներ: Անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝

- Արմենտել ՀՁ-ի կողմից տրված դիմումի կտրոնը.
- Ֆիզիկական անձինք պետք է ներկայացնեն իրենց անձնագրերը.
- Կազմակերպությունների ներկայացուցիչները պետք է ներկայացնեն ընկերության պետ. ռեգիստրի պատճենը, լիազորագիր եւ կնիք:

Այն ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ովքեր 2003 թ. նոյեմբերի 18-ից Արմենտել ՀՁ ՓԲԸ Երեւանի բաժանորդային սպասարկման բաժիններ ներկայացրել են բջջային պայմանագրային կապուղիներ (SIM fars) ձեռք բերելու դիմումներ, դրանք ստանալու վերաբերյալ լրացուցիչ կտեղեկացվեն մոտ ապագայում:

ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻ

For Your Internal News of Armenia Log on to
www.azg.am
In Armenian, Russian, English and Turkish

ՀՀ Կենտրոնական բանկը 5.12.2003 թ. ժ. 9:00-ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	566.53	560.90	572.20
EUR	1	եվրո	684.03	679.90	688.10
RUR	1	ռուս. ռուբլի	19.08	17.90	20.20

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Բաց Բժշկական Ակումբ» հասարակական կազմակերպությունը իրականացրել է պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության ու սպասարկման վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումների նկարագրով բրոշյուրի տպագրությունը՝ ազգաբնակչությանը ծանոթացնելու նպատակով:

Բոլոր հաղթաթղթերը եւ հասարակական կազմակերպությունները կարող են անվճար ձեռք բերել այն հետեւյալ հասցեով՝

Զաֆյան 5/1, Բժշկական Գենետիկայի Կենտրոն, 1 հարկ, 10.00-15.00

Տեղեկությունների համար զանգահարել՝ 544-367

Գովազդի համար զանգահարել՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիլ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 4. 12. 2003 Գինը՝ 100 դրամ